2014, ՄԱՐՏ Բ, ԹԻՎ 6 (410)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Քուվեյթի համալսարանի ռեկտորին

Մարտի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Քուվեյթի համալսարանի ռեկտոր Աբդ ալ-Լատիֆ Ահմադ ալ-Բադրի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանի: Հանդիպմանը ներկա էին նաեւ ԵՊՀ-ի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան եպս Ժամկոչյանը եւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ եպս Սարոյանը:

Հանդիպման սկզբում ԵՊՀ-ի համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց պատվիրակության անդամներին, ապա անդրադարձավ Քուվեյթի համալսարանի ձեռքբերումներին, ինչպես նաեւ՝ այցի ընթացքում Հայաստանի տարբեր կրթական հաստատությունների հետ ձեռք բերված պայմանավորվածություններին:

Նորին Սրբությունը, ողջունելով պատվիրակության այցը Մայր Աթոռ, ուրախություն հայտնեց ԵՊՀ-ի եւ Քուվեյթի համալսարանի միջեւ ձեւավորված փոխգործակցության համար: Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակություն հայտնեց Հայաստանի անկախության հռչակումից հետո գիտության ու կրթության ոլորտում երկու երկրների միջեւ ձեւավորված գործակցային հարաբերությունների առիթով՝ այդ կապերի ամրապնդման գործում կարեւորելով նաեւ հայ համայնքի դերակատարությունը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ երկու ժողովուրդների՝ դարերի պատմություն ունեցող բարեկամական հարաբերություններին՝ մասնավոր երախտագիտություն հայտնելով Քուվեյթի իշխանություններին՝ Հայոց ցեղասպանության ժամանակ հայ ժողովրդի զավակների նկատմամբ ցուցաբերված զորակցության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց նաեւ Հայ Եկեղեցու հոգեւոր կրթական հաստատությունները՝ ընդգծելով, որ Գեւորգյան հոգեւոր ճեմարանը սերտ կապեր է հաստատել արտասահմանյան տարբեր համալսարանների հետ: Նորին Սրբությունը հավելեց, որ ներկայումս աշխատանքներ են տարվում իսլամական կրթական հաստատությունների հետ կապեր հաստատելու ուղղությամբ, որը կնպաստի նաեւ կրոնական երկխոսության զարգացմանը:

Զրույցի ավարտին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Քուվեյթը շարունակի առաջադիմել խաղաղության պայմաններում, եւ Աստծո օրհնությամբ բարին առատանա մարդկային կյանքում:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Մարտի 11-13-ը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը՝ ընդլայնված կազմով:

Ժողովի սկզբում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց խորհրդի անդամներին՝ այն նվիրումի եւ հանձնառության համար, որ նրանք դրսեւորում են ի նպաստ Մայր Աթոռի առջեւ ծառացած խնդիրների լուծման եւ Հայ Եկեղեցու առաքելության առավել արդյունավորման:

Ժողովի նիստերն ատենապետեցին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը եւ ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը:

Ժողովին Նորին Սրբությունը ԳՀԽ-ի անդամներին ներկայացրեց Մայր տաճարի հիմնանորոգության եւ ամրակայման ուղղությամբ ձեռնարկված քայլերը՝ տեղեկացնելով, որ նախագծային աշխատանքներն ավարտին են մոտեցել, եւ առաջիկայում պիտի սկսվեն շինարարական աշխատանքները: Վեհափառ Հայրապետը հայտնեց, որ ներկայում աշխատանքներ են տարվում նաեւ Մայր տաճարի նորոգության համար անհրաժեշտ գումարի հայթայթման ուղղությամբ:

2014 թ. նոյեմբեր ամսին նախատեսված եպիսկոպոսաց ժողովի նախապատրաստական աշխատանքների մասին ժողովականներին տեղեկություններ փոխանցեց ժողովի կազմակերպիչ հանձնախմբի համաատենապետ Խաժակ արք. Պարսամյանը: ԳՀԽ-ն գոհունակությամբ ծանոթացավ ժողովը նախապատրաստող հանձնախմբերի կատարած աշխատանքին եւ իր թելադրությունները կատարեց ժողովի օրակարգի ձեւավորման վերաբերյալ:

Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման ուղղությամբ կատարված աշխատանքի մասին զեկույց ներկայացրին Հայ Եկեղեցու սրբադասման հանձնախմբի համաատենապետ, Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արք. Պետրոսյանն ու հանձնախմբի անդամ, Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի բաժնի տնօրեն Բագրատ եպս Գալստանյանը: Ժողովականները, գնահատանք հայտնելով հանձնախմբին, անդրադարձան սրբադասման կանոնի, սրբապատկերի եւ վկայաբանության պատրաստման գործընթացին, ինչպես նաեւ՝ սրբադասման հռչակման հետ կապված մանրամասներին:

Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարման մասին զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը: ԳՀԽ-ն որոշեց ժողովը գումարել սեպտեմբերի 7-9-ը՝ նախանշելով ժողովի օրակարգը: Այս առնչությամբ խորհուրդը քննության առավ նաեւ Եզնիկ արք. Պետրոսյանի գլխավորած հանձնախմբի կողմից մշակված եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կանոնադրության նախագիծը եւ թելադրեց լրամշակումից հետո այն ներկայացնել ժողովի վավերացմանը:

Շարունակությունը՝ էջ 2

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Սկիզբը՝ էջ 1

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Մայր Աթոռի միջոցառումների վերաբերյալ զեկույց ներկայացրեց հանձնախմբի ատենապետ Հովնան արք. Տերտերյանը: Քննարկման արդյունքում ամբողջացվեց Մայր Աթոռի կողմից իրականացվելիք միջոցառումների ցանկը, որով, մասնակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, հիշատակի արարողություններ կկազմակերպվեն աշխարհասփյուռ հայաշատ համայնքներում, միջեկեղեցական համաժողովներ եւ աղոթքի էկումենիկ արարողություններ, ինչպես նաեւ տեղի կունենան երիտասարդական միջազգային կրոնաժողովներ, թեմերում կիրականացվեն Եղեռնի վերաբերյալ փաստագրական նյութերի ցուցադրումներ եւ այլն:

Ժողովականներն իրենց գնահատանքը հայտնեցին հանձնախմբին՝ հանձնարարելով շարունակել միջոցառումների կազմակերպման աշխատանքները:

Գերագույն հոգեւոր խորհուրդը մասնավոր քննության առավ 2015 թ. կայանալիք մյուռոնօրհնության արարողության հետ կապված հարցեր: Այդ առնչությամբ Մայր Աթոռի դիվանապետ Արշակ սրբազանը տեղեկացրեց, որ Վեհափառ Հայրապետի կողմից ստեղծված հանձնախումբն արդեն սկսել է մյուռոնօրհնության նախապատրաստական աշխատանքները: Գերագույն հոգեւոր խորհուրդն էլ թելադրեց հանձնախմբին՝ ձեռնամուխ լինել մյուռոնօրհնության առիթով քույր Եկեղեցիներին հրավերների առաքմանը եւ հորդորեց Սփյուռքի թեմերի առաջնորդներին խրախուսել ժողովրդին՝ մասնակցելու ազգային-եկեղեցական կյանքում այս կարեւոր իրադարձությանը:

Ժողովականներին ներկայացվեց նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի գործունեության 2013 թ. տարեկան հաշվետվությունը, որում անդրադարձ է կատարված անցնող տարում հայրապետական ընդունելություններին ու այցելություններին, ներեկեղեցական եւ միջեկեղեցական ասպարեզներում իրագործված ծրագրերին, Մայր Աթոռի միաբանությանը, Եկեղեցու քարոզչական, կրթադաստիարակչական եւ սոցիալական առաքելությանը: Մասնավորապես տեղեկացվեց, որ 2013 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ունեցել է շուրջ 70 պաշտոնական հանդիպում՝ եկեղեցական ու պետական բարձրաստիճան պաշտոնյաների ու պատվիրակությունների հետ: Նշված տարում Վեհափառ Հայրապետն այցելել է Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ հայոց Արեւելյան, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմեր՝ մասնակցություն բերելով հոգեւոր-մշակութային տարբեր ձեռնարկումներին եւ իր հայրական օրհնությունը բաշխելով Եկեղեցու հավատավոր զավակներին:

Այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսության եկեղեցականների թիվը 676 է, որոնցից 53-ը՝ արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 46-ը՝ ծայրագույն վարդապետ եւ վարդապետ, 50-ը՝ աբեղա, 421-ը՝ քահանա, 106-ը՝ սարկավագ, ովքեր ծառայում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու տարբեր թեմերում ու կառույցներում: ՀՀ զինված ուժերում իր ծառայությունն է բերում թվով 47 հոգեւոր սպասավոր: Մայր Աթոռի հովանու ներքո գործող հոգեւոր-կրթական հաստատություններում՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, Սեւանի Վազգենյան դպրանոցում եւ Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանում, սովորում են 219 ուսանող ու աշակերտ: Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի հովանավորությամբ գործող հայորդյաց 7 տները, ուր հաճախում է ավելի քան 3000 աշակերտ, 2013 թ. եկեղեցական, ազգային եւ պետական տոների առիթներով կազմակերպել են բազմաբնույթ 176 միջոցառում:

Շարունակվել են Մայր Աթոռի կողմից իրականացվող սոցիալական ծրագրերը, որոնց առավել համակարգման նպատակով Մայր Աթոռում ստեղծվել է նաեւ Սոցիալական ծառայության գրասենյակ: 2013 թ. սեպտեմբեր ամսին գումարված եպիսկոպոսաց ժողովի կողմից հաստատվել է 2 000 000 ԱՄՆ դոլարի նախնական դրամագլուխ ունեցող հիմնադրամ՝ Հայաստանի, Արցախի եւ սիրիահայության կարիքավոր զավակներին աջակցություն ցուցաբերելու համար: Տեղեկացվեց նաեւ, որ տարվա ընթացքում Մայր Աթոռը շարունակել է պարբերաբար օգնություն ցուցաբերել ինչպես Սիրիայի հայ համայնքին եւ ազգային հաստատություններին, այնպես եւ Հայաստանում ապաստան գտած սիրիահայ ընտանիքներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկացրեց Գերագույն հոգեւոր խորհրդի նոր անդամների՝ Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գարեգին արք. Բեքչյանի, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանի եւ Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Հովհաննիսյանի նշանակման մասին՝ Տաթեւ արք. Ղարիբյանի, Նորվան արք. Զաքարյանի, Մեսրոպ արք. Գրիգորյանի եւ հանգուցյալ Աղան արք. Պալիոզյանի փոխարեն: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ԳՀԽ-ի նախկին անդամներին՝ խորհրդի կազմում իրենց նվիրյալ եւ օգտակար ծառայության համար:

ԳՀԽ-ի ժողովի ընթացքում քննարկվեցին նաեւ Ֆրանսիայի, Կանադայի, Շվեյցարիայի, Բրազիլիայի, Վիրահայոց թեմերին, Հոլանդիայի ու Բելգիայի հայ եկեղեցական համայնքներին վերաբերող հարցեր, ինչպես նաեւ՝ կարգապահական խնդիրներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտել է Քեսաբում ծայրահեղականների իրականացրած ահաբեկչական գործողությունները



Մարտի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հեռախոսազրույց է ունեցել Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ՝ Քեսաբի եւ շրջակա բնակավայրերի բռնազավթման առնչությամբ, որի հետեւանքով տարհանվել է քաղաքացիական բնակչությունը, մեծավ մասամբ՝ հայ ընտանիքներ, ավերվել եւ հրկիզվել են տներ, պղծվել սրբավայրեր: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոր մտահոգությունն է արտահայտել կատարվածի առնչությամբ եւ դատապարտել Քեսաբի խաղաղ բնակչության նկատմամբ ծայրահեղականների իրականացրած ահաբեկչական գործողությունները, որոնք աջակցություն են ստացել Թուրքիայի կողմից: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն իր զորակցությունն է հայտնել Արամ Ա Կաթողիկոսին:

Քեսաբում ստեղծված կացության վերաբերյալ Նորին Սրբությունը հեռախոսազրույց է ունեցել նաեւ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանի հետ:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռում հրավիրված խորհրդակցության ընթացքում հաստատել է, որ Սուրբ Էջմիածինը՝ աշխարհասփյուռ իր թեմական կառույցներով, շարունակելու է իր աջակցությունը սիրիահայությանը՝ աղոթելով, որ խաղաղությունը վերահաստատվի Սիրիայի աստվածասեր ժողովրդի կյանքում, եւ տեղահանված ու գաղթական ընտանիքները վերադառնան իրենց հայրենի օջախները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրն Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքի մահվան առիթով

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Ասորի Ուղղափառ Եկեղեցու Սբ Սինոդին, հոգեւոր դասին եւ հավատացյալ ժողովրդին՝ Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարք Նորին Սրբություն Իգնատիուս Զաքքա Ա-ի մահվան առիթով: Վեհափառ Հայրապետի ցավակցագրում մասնավորապես ասվում է. *«Ասորի Ուղղափառ Եկեղեցին կորցրեց «լավ հովվի», ով վերջին երեսունչորս տարվա ընթացքում մեծ նվիրումով ու սիրով իրականացրեց Քրիստոսի Սբ Եկեղեցու առաքելությունը: Մեծ նախանձախնդրությամբ ու իմաստությամբ երջանկահիշատակ Իգնատիուս Զաքքա Ա Պատրիարքն առաջնորդեց Ասորի Ուղղափառ Եկեղեցին հատկապես Միջին Արեւելքում՝ ներկայիս տիրող դժվարին քաղաքական իրավիճակում: Շնորհիվ Զաքքա Պատրիարքի ջանքերի՝ վանական կյանքը վերածնունդ ապրեց եւ զարգացավ, Ասորի Ուղղափառ Եկեղեցին կարեւոր ներդրում ունեցավ միջեկեղեցական եւ միջկրոնական երկխոսություններում, ինչպես նաեւ՝ աշխարհում համերաշխության եւ խաղաղության խրախուսման գործում: Մեր Եկեղեցիների միջեւ եղբայրական եւ ջերմ հարաբերությունները դրսեւորվել են պաշտոնական տարբեր այցերով եւ շփումներով, որոնց մենք ականատես ենք եղել ե՛ւ մեր երջանկահիշատակ նախորդների գահակալության շրջանում, ե՛ւ մեր օրոք՝ անձնական հանդիպումների ժամանակ»*:

Ամենայն Հայոց Հայրապետը, աղոթելով Ի Տեր հանգուցյալ Պատրիարքի համար, Սբ Հոգու մխիթարություն է մաղթել Ասորի Եկեղեցու հոգեւոր սպասավորներին ու հավատավոր հոտին:

Տեղի ունեցավ Շնորհք ծ. վրդ. Գասպարյանի հուղարկավորության արարողությունը



Մարտի 27-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանական գերեզմանատանը տեղի ունեցավ Ս. Էջմիածնի երիցագույն միաբաններից մեկի՝ ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի հոգեւոր սպասավոր Շնորհք ծ. վարդապետ Գասպարյանի հուղարկավորության արարողությունը, որին ներկա էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, հանգուցյալի հարազատներն ու մտերիմները: Բարեհիշատակ հայր սուրբն ի Տեր հանգչել էր մարտի 3-ին՝ ԱՄՆ Բելվիլ Իլլինոյի հիվանդանոցում:

Արարողության ընթացքում հոգեւորականաց դասն աղոթք բարձրացրեց առ Աստված՝ հանգուցյալի հոգու հանգստության եւ խաղաղության համար:

Հուղարկավորությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց արարողության մասնակից միաբաններին ու հանգուցյալ հայր սուրբի մտերիմներին՝ ցավով նշելով, որ Հայ Եկեղեցին կորցրեց Եկեղեցու, ազգի եւ հայրենիքի նվիրյալ, անսասան հավատքի տեր, աստվածսիրության խորին ապրում ունեցող հոգեւորականի: Նորին Սրբությունն ընդգծեց, որ հայր Շնորհքն օրինակելի անձ էր՝ իր եկեղեցասեր ծառայությամբ ու նվիրումով, պարկեշտ ու խոնարհ վարքով ու կյանքով: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ հանգուցյալ Շնորհք վարդապետի բարի հիշատակը կշարունակի ոգեշնչել երիտասարդ հոգեւորականներին նաեւ եկեղեցական-վեր բարեսիրական ձեռնարկումներով: Հանգուցյալ հայր սուրբի նվիրատվությամբ տարիներ առաջ Վաղարշապատում հիմնվել է «Շնորհք Գասպարյան» տարեցների տունը, որն առաջիկայում կսկսի գործել հայր Շնորհքի անձնական խնայողություններով հաստատված հիմնադրամի շնորհիվ: Ի Տեր հանգչած նվիրյալ հոգեւորականը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին է նվիրել նաեւ իր անձնական գրադարանը՝ մեծապես կարեւորելով հոգեւորականաց դասի պատրաստությունը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը, աղոթք բարձրացնելով հանգուցյալ հայր սուրբի համար, մաղթեց, որ Աստծո օրհնությունը լույսի շողերով իջնի Շնորհք ծ. վարդապետ Գասպարյանի շիրմին:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑԻ (1780-1799)

Սկիզբը՝ 2013-ի թիվ 21-24, 2014-ի թիվ 1-5

Ղուկասի շինարարության գագաթը եղավ կաթողիկեի ներքին հարդարումը: Մայր տաճարը վերջին անգամ վերանորոգվել էր Աստվածատուր կաթողիկոսի օրով, երբ պատերը տեղ-տեղ ծածկվեցին պատկերներով եւ անհեթեթ ձեւով նկարվեցին: Ժամանակն իր գործը կատարեց, եւ կամարների վնասվելու պատճառով անձրեւը ներս էր թափվում: Սիմեոնը փորձեց կարգի բերել՝ Սահակ ճարտարապետի ձեռքով, սակայն դժվարությունները եւ կաթողիկոսի հիվանդությունը թույլ չտվեցին շատ բան անել: Անելիքը բաժին հասավ Ղուկասին, որն այդ սկսեց քաջահմուտ ճարտարապետ Գասպարի հետ: Աջակողմյան 12 մեծ սյուները խախտվել ու բեկբեկվել էին: Վերանորոգության ծախսերը հոգացին ագուլեցի Կարապետ Պապայանը եւ կեսարացի Խըդըր Աբրահամյանը: Վերանորոգման ժամանակ պարզվեց, որ տաճարն ավելի անմխիթար վիճակում է, եւ գմբեթի ու առհասարակ տաճարի փլուզման վտանգ կար: Ղուկասն անձամբ էր գալիս եւ ճարտարապետին ցուցումներ տալիս, թե ինչպես գործը կատարել, ինչպես փշրված քարերը հանել: Ղուկասն այն աստիճանի ցույց տվեց իր հմտությունը, որ ճարտարապետն անգամ նրա խորհրդին էր դիմում: Նորոգելուց հետո տաճարը ներսից ծեփով ծածկվեց: Դա եղավ 1786 թվին: Նորոգչական մյուս աշխատանքներն էլ կատարվեցին այդ տարում: Սակայն պահանջվում էր ներսի անշուք ծեփը զարդարել: Պետք էր նաեւ նախկին պատկերները վերականգնել: Այդ գործը հանձնարարվեց նշանավոր նկարիչ Հովնաթան Հովնաթանյանին, որը Հակոբի որդին էր եւ շոռոթեցի Հովնաթանի թոռը: Պապն ավելի ծանոթ էր Նաղաշ մականունով: Հովնաթանը վրաց արքունիքի արվեստագետն էր, որին Հերակլը թույլ տվեց գալ Էջմիածին եւ իր աշակերտների հետ ձեռնամուխ լինել տաճարի ծաղկազարդմանը: Կազմվեց ծրագիր, որն արժանացավ Ղուկասի հավանությանը եւ կյանքի կոչվեց: Ամբողջ տաճարը ծաղկազարդվեց պատշաճ դասավորությամբ՝ համաձայն Հին ու Նոր Կտակարանների: Արվեստագետների կարծիքով՝ ծաղկազարդումը կատարվել է առավելապես պարսկական ոճով, իսկ պատկերների մեջ իշխել է իտալականը, սակայն օտար ազդեցությունը ստրկամտության արդյունք չէր, այլ ամեն ինչ հարմարեցվել էր հայկական միջավայրին ու զգացումներին: Ուստի համարձակորեն պետք է դրանք հայության համար գեղարվեստական գործեր անվանել:

Զարդանկարները եւ ծաղկանկարները պարզապես որմնանկարներ էին՝ արված ծեփի, իսկ երբեմն էլ՝ մարմարի վրա: Կենդանագիրներն արված էին կտավի վրա եւ տեղադրված՝ հարմար տեղերում: Նկարները պատրաստելիս ի հայտ եկավ վարպետ Ստեփանոս Լեհացու ձեռքի շնորհքը, եւ իհարկե փայլեց հմուտ նկարիչ Հովնաթանը: Այդպես է գրում Շահխաթունյանը, սակայն հայտնի է, որ Ղուկաս Կարնեցու օրոք այլեւս կենդանի չէին ո՛չ Ստեփանոս Լեհացին եւ ո՛չ էլ նկարչի հայր Հովնաթանը: Միակ եզրակացությունն այն է, որ նրանք մասնակցել էին Աստվածատուրի ժամանակ պատրաստված նկարներին: Երիտասարդ Հովնաթանն ազդվել էր նրանցից կամ ուրիշ նկարիչներից: Հովնաթանը վերականգնեց հնացած ու անշքացած կտավները, նորոգեց վանքի խաչվառները, որոնք Ղուկասը շքեղ զարդարել տվեց գույնզգույն կերպասներով: Այդ ամենն արվեց նվիրատվությունների միջոցով՝ սկսած 1786-ից, տեւեց 5-6 տարի, այսինքն՝ մինչեւ 1791 կամ 1792 թիվը: Ըստ որում՝ դա արվել է տեղական բռնապետների կռիվների շրջանում, որոնք ավարտվեցին Աղա Մահմադ խանի՝ Հայաստանի վրա արշավելով: Ղուկասը մեծ դժվարություններ կրեց՝ կատարված աշխատանքներն անեղծ պահելու համար: Եվ ինչ. Խրիմյան Հայրիկն այդ ամենը, ինչպես գրում են անգամ նրանով հիացողները, քանդել տվեց եւ ոչնչացրեց: Փրկվել են միայն գմբեթի որմնանկարները եւ այն էլ՝ Պետերբուրգի հնագիտական ընկերության միջամտության շնորհիվ: Նկարների մի մասը ոչնչացվել է, իսկ մյուսներն էլ ուղարկվել են աննշան գյուղերի եկեղեցիներ: 120-ից հազիվ 20 նկար է մնացել:

Ղուկասը հայադավանության մեծ ջատագով էր: Իսկ ահա Մելքիսեդեկ Մուրադյան եպիսկոպոսը Սարգիս Թեքիրդաղցի վարդապետի՝ Էջմիածին գալու կապակցությամբ գրում է, թե իբր Ղուկասը կամեցել է Հայոց Եկեղեցին



միացնել Հռոմեականին, եւ որ իբր դրա համար միաբանները խոշտանգել են կաթողիկոսին ու աքսորել: Իբր նա ազատվել է վրաց Հերակլ թագավորի շնորհիվ, գաղտնի գնացել Տփղիս, իսկ այնտեղից էլ՝ Եվրոպա: Սակայն ո՛չ նրա թղթակցությունների շարքը, ո՛չ Արղությանի հետ ունեցած հարաբերությունները եւ ո՛չ էլ հիշատակագրությունները չեն վկայում, որ Ղուկաս Կարնեցու կյանքում նման իրողություն է եղել: Ուստի մնում է դա անհեթեթ ենթադրություն համարել: Մուրադյանից էլ առաջ նման կասկած է հայտնել Փափազյանը, որը, սակայն, դա ասել է ոչ թե Ղուկասի, այլ ոմն Սագսի մասին, ինչը Մուրադյանը սխալմամբ վերագրել է Ղուկաս կաթողիկոսին: Եթե անգամ նա աշակերտել է Հարություն Բասենցի արքեպիսկոպոսին, ապա վերջինս շատ հեռու էր կաթոլիկությունից: Իրականում Ղուկասը Սիմեոնի աշակերտն էր եւ Մայր Աթոռում մշտապես եղել է հայադավանության ջատագով:

Շարունակությունը՝ էջ 4

Հուլիսին կգումարվի Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորման ներկայացուցչական ժողով

Մարտի 11-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ, Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորման (ՀԵԵՄ) հոգեւոր պատասխանատու Հովնան արք. Տերտերյանի նախագահությամբ տեղի ունեցավ Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորման կենտրոնական գրասենյակի ժողովը: Ժողովին մասնակցում էին ՀԵԵՄ-ի բուհական պատասխանատու Գեղամ սրկ. Ավետիսյանը, Կենտրոնական գրասենյակի տնօրեն Գեւորգ Մկրտչյանը եւ գրասենյակի աշխատակազմը: Քննարկվեցին առաջիկայում՝ հուլիսի 1-4-ը, գումարվելիք ներկայացուցչական ժողովի կազմակերպչական հարցերը: Որոշվեց, որ ժողովին մեկական ներկայացուցչով կմասնակցեն Հայ Եկեղեցու Նվիրապետական բոլոր Աթոռներն ու թեմերը: Օրակարգում որոշվեց քննարկել 2015 թ. գումարվելիք 3-րդ պատգամավորական ժողովի կազմակերպչական աշխատանքները եւ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված ոգեկոչման ծրագիրը:

Քննարկմանը Հովնան սրբազանը կարեւորեց միջթեմական երիտասարդական համագործակցության ծրագրերի մշակումը, որը նույնպես կարծարծվի ներկայացուցչական առաջիկա ժողովում: Իսկ գրասենյակի տնօրեն Գեւորգ Մկրտչյանը Հովնան սրբազանին ներկայացրեց կատարված աշխատանքները, քննարկվեցին հետագա ծրագրերը:

Ժողովին հրավիրված էր նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հովակիմ եպս Մանուկյանը, ում հետ քննարկվեցին քույր Եկեղեցիների երիտասարդական թեւերի հետ համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Բուլղարահայոց թեմի քահանայաց ժողովը խստորեն դատապարտեց Քեսաբի դեպքերը

Մարտի 26-ին Բուլղարահայոց թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ քահանայաց ժողով՝ նախագահությամբ առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Աբգար վարդապետ Հովակիմյանի: Ժողովին մասնակցում էին Բուլղարիայում հոգեւոր ծառայություն կատարող բոլոր արժանապատիվ քահանա հայրերը. տեղեկացնում են Բուլղարահայոց թեմի մամլո դիվանից:

Նախքան ժողովը՝ առավոտյան, Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց Արեւագալի ժամերգություն, որին ներկա էին նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներ եւ հավատացյալներ: Ժամերգությունից անմիջապես հետո հոգեւորականաց դասն սկսեց իր աշխատանքը:

Ժողովն առաջին հերթին անդրադարձավ վերջին օրերին Քեսաբի շուրջ տեղի ունեցող դեպքերին: Հոգեւոր հայրերն իրենց խոսքում խստորեն դատապարտեցին Քեսաբի վրա կատարված ահաբեկչական գործողությունները եւ մանավանդ Թուրքիայի անմիջական մասնակցությունն ու օժանդակությունը՝ քեսաբահայության նկատմամբ իրականացվող մերօրյա այդ ցեղասպանությանը: Ժողովը որոշում ընդունեց, որ առաջնորդական տեղապահը, բուլղարահայ համայնքի անունից, պաշտոնական նամակով դիմի Բուլղարիայի կառավարությանը, որ վերջինս միջամտի եւ օգտագործի իր դիվանագիտական կարողությունները՝ քեսաբահայության նկատմամբ իրականացվող բռնությունները կասեցնելու:

Հոգեշնորհ հայր սուրբն էլ իր հերթին հորդորեց հոգեւոր հայրերին, որ իրենց համայնքներում ակտիվ գործունեություն ծավալեն՝ սիրիահայ համայնքին օգնություն կազմակերպելու:

Այնուհետեւ հոգեւորականաց դասը քննարկեց ծիսական մի շարք խնդիրներ: Կարեւորվեց հատկապես այն փաստը, որ բոլոր հոգեւորականները միեւնույն ծիսական կարգով կատարեն եկեղեցական արարողությունները եւ խորհուրդները:

Քննարկման նյութ հանդիսացավ նաեւ հոգեւոր հովիվների գործունեությունն իրենց համայնքներում: Առաջնորդական տեղապահը հորդորեց բոլոր քահանա հովիվներին, որ առավելագույնս ակտիվ ու մտերիմ հարաբերությունների մեջ լինեն իրենց եկեղեցիների հավատացյալների հետ՝ հոգալով նրանց հոգեւոր կարիքները: Միեւնույն ժամանակ քննարկվեցին քահանաների եւ ծխական խորհուրդների միջեւ հարաբերությունները: Արժանապատիվ քահանա հայրերը կարեւորեցին հատկապես այդ հարաբերությունների մեջ եղած ներդաշնակությունն ու ջերմությունը:

Քահանայաց ժողովի ավարտին Բուլղարիայի ողջ հոգեւորականաց դասը, գլխավորությամբ առաջնորդական տեղապահի, իրենց սրտագին աղոթքն առաքեցին առ Աստված՝ հանուն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Բուլղարահայոց թեմի եւ ողջ հայ ժողովրդի: Մասնավոր աղոթք կատարվեց կենաց ու մահու պայքար տվող Քեսաբի ու քեսաբահայության համար:

Այնուհետեւ ժողովին ներկա բոլոր հոգեւորականները հրավիրված էին մասնակցելու Սոֆիայի «Հայկական տանը» կազմակերպված Միջինքի սիրո ճաշին, որը նախաձեռնել եւ պատրաստել էին Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցու տիկնանց միությունը եւ ՀԲԸՄ-ի Սոֆիայի մասնաճյուղի անդամները:

«ԿԱՆԹԵՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ»
Հայկական տեղեկատվական
կայք (ԲՈՒԼՂԱՐԻԱ)

ՀԱՅՐԵՆԻՔ. ԲԱՆՔ ՀԱՅՈՑ

Ա. Հայոց հայրենիք եւ հայ գրականություն

(պատմական ակնարկ)



Շահան Նաթալի

Սկիզբը՝ թիվ 4-5

Հայրենասիրական տարերքը կարիք է զգում զտման, բյուրեղացման եւ ինքնուրույնության:

Անկախ նյութի բնույթից՝ բուն հայրենասիրակա՞ն, թե՞ համամարդկային խնդիրներ է արծարծում, ազգային գիտակցության մեջ դրանք վերափոխարկվում են հոգեբանական վիճակների եւ վերակերպավորվում գործող հերոսի: Դա է պատճառը, որ հայ հայրենասերները սահմանափակ հերոսներ չեն, այլ՝ համամարդկային արժեքների կրողներ: Հակառակ պարագայում նրանք դատապարտված են կործանման կամ լավագույն դեպքում՝ գործունեության հնարավորությունների սահմանափակման:

Իսկ մեկ այլ պարագայում այդպիսի հերոսները դառնում են ծաղրուծանակի առարկա, ինչպես Հակոբ Պարոնյանի, Երվանդ Օտյանի երկերում:

Հայրենասիրական տրամադրություններն ու զգացումներն այնքան համապարփակ են, որ ոմանք դարձրին չարաշահման նյութ, անգամ նյութականացրին այն: Ահա այդպիսիների կերպարներ են բացահայտում Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջեր», «Հոսհոսի ձեռատետրը», «Կսմիթներ» շարքերը, «Պաղտասար Աղբար» կատակերգությունը: Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակը, Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի», «Թիվ 17 խաֆիեն: Ժամանակակից պատմական վեպ» (1919-1920) վեպերը, «Հեղափոխության մակաբույծներ» պատմվածքների շարքը:

Դարասկիզբը բերում էր ազատության եւ հավասարության գաղափարներ: Բոստոնի «Շանթ» ամսաթերթը «Մեր նպատակը» խմբագրականում (1910, թիվ 1, մայիս) ավետում է՝ աշխարհը հնացել է. «Հինցած են սրբություններն ալ, նվիրատվություններն ալ, աստվածներն ալ...»: Հինը պիտի մեռնի, աշխարհը պիտի քանդել ու նորից շինել: Իսկ ի՞նչ դեր ունեն այստեղ հայն ու Հայաստանը: Քանի որ թերթն ուներ ընկերվարական (սոցիալիստական) ուղղվածություն, ուստի գրականության լրացուցիչ պայմանը համարում է «հեղաշրջելու, առաջնորդելու հանգամանքը» (1910, թիվ 4, օգոստոս): Ըստ այդմ՝ գրագետն իր գրականությամբ պետք է առաջնորդի դեպի նոր կյանք՝ իր մեջ կրելով «դարերի գուշակությունը»: Գրողը պետք է լինի վաղվա «իմաստուն ճարտարապետը»:

Շահան Նաթալին «Վրեժիս երգը» ուղղում է համիդյան զոհերի հիշատակին: Գործեր ունեն **Զապել Եսայանը՝** «Գուշակը» (պատմվածք), **Հրանտ Նազարյանցը, Արսեն Երկաթը** եւ ուրիշներ:

Պոլսի «Շանթը» առաջին համարի հանգանակում արձանագրում է. «Ոչ մեկ երկրի քաղաքական կյանքը այնքան զորավոր կերպով ազդած է Գրականության եւ Արվեստի վրա, որքան մեր մեջ» («Շանթ», կիսամյա հանդես, Կ. Պոլիս, 1911, թիվ 1, 15/28 հունիս, խմբագիր՝ Մերուժան Պարսամյան): Ասածն այն է, որ երիտթուրքերի սահմանադրությունը «...բոլոր գրագետները գինովցուց ու քաղաքական անպատասխանատու գոյության մը բավիղներուն մեջ մոլորեցուց զանոնք»: Կոչ է անում հանդարտեցնել «ազգային մոլեգնոտ կռիվներեն հոգնած» գրողներին՝ ստեղծելու նոր միջավայր, արվեստի նոր հանգրվան:

Սահմանադրությամբ ոգեւորված, 1915-ի ցեղասպանության կանխատեսումը չունեցող հայ գրողներն են, ովքեր համիդյան շրջանի «ցեղին սուգն» են խնկարկում նոր վստահեցումների առջեւ: «Գրողներ ունինք, բայց ոչ գրականություն»,- գուժում է հանդեսը «Թրքահայ գրական շարժումը» հոդվածում՝ ուշադրություն հրավիրելով ճահճացյալ գրական-մշակութային կյանքին: Դեռ ավելին. «Հայ գրող վարպետները բացարձակ ընդօրինակողներ են, ոչ թե հղացողներ» (նույն տեղը, 1911, թիվ 2):

Այս հոդվածին հակադարձում է **Երուխանը**. «Համիդ .... չկրցավ տեսնել, թե ճղակոտոր ելլող հայութենեն նոր եւ տարօրինապես հզոր գրականություն մը կը հառնե: Ահա թե ինչու կը սխալին անոնք, որ կ'ողբերգեն հայ գրականության անկումին վրա...» (նույն տեղը, 1911, թիվ 3). Լալկանությունը համարելով տոհմական պակասություն՝ Երուխանը տեսակետ է հայտնում, ըստ որի՝ Ոսկեդարից հետո վերջին քսան տարում հայ գրականությունը հասել է ծաղկման: «Կարճատեսությունը քննադատության մեջ» հոդվածում Ենովք Արմենն առարկում է Երուխանին. «...միջակություններեն գոհ ու երջանիկ սակավապետ լավատես» (նույն տեղը, թիվ 4): Մերուժան Պարսամյանը «Դժգոհներ՝ գրականության մեջ» հոդվածում «արվեստագետ», «հմուտ», «իմաստասեր» քննադատի կերպարն է բարձրացնում ընդդեմ իմաստա՛կ գրողների. «Ավելորդ գրական դպրոցներ չկան: Կան միայն ավելորդ գրողներ» (նույն տեղը, թիվ 7):

Հորձեռանդ գրչով գրքունակ գրողներ միշտ են եղել. հիմա նոր ժամանակ էր. Արտաշես Հարությունյանը Միքայել Վարանդյանի «Վերածնվող հայրենիքը եւ մեր դեռը» (Ժնեւ, 1910) գիրքն է դարձնում օրախնդիր (նույն տեղը, թիվ 10) եւ արծարծում հայրենաշինության գաղափարներ:

Երուխան

Ավելացնենք, որ «Շանթի» շուրջ համախմբվել էր արեւմտահայ գրողների ընտրանին:

Բոլորն ապրում եւ գրում էին հայրենիքի վաղվա տեսլականով: Կարծես թե մոտ էր ազատության ու վերականգնումի օրը, մանավանդ որ համընթաց շարժումներ էին ծավալվել Բալկաններում եւ Բուլղարիայում:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՅԻ

(1780-1799)

Սկիզբը՝ էջ 3

Հետաքրքիր է նաեւ այն, որ երբ հռոմեադավաններն են գրում Ղուկասի մասին, ապա նրան ներկայացնում են իբրեւ կաթոլիկությանը հակամետ եւ հռոմեադավանների հալածիչ: Սարգիս Թեքիրդաղցին ձեռնադրվել է Բասենցու կողմից՝ նրա Տրիեստում գտնվելու ժամանակ՝ 1782-ից հետո: Նա փորձել է ազդել Էջմիածնի վրա եւ հռոմեադավանություն տարածել: Նա Էջմիածին է եկել ե՛ւ որպես աշխարհական, ե՛ւ որպես եկեղեցական եւ փորձել է հորդորել անգամ կաթողիկոսին, որ կաթոլիկություն ընդունի եւ տարածի: Դրան կաթողիկոսն ընդդիմացել է՝ վկայությամբ նույնիսկ հռոմեադավան պատմիչի: Նա պարզապես Սարգսին կարգադրել է շուտափույթ թողնել Էջմիածինը: Այնուամենայնիվ Սարգսի հետ ունեցած զրույցը Ղուկասը ներկայացրել է եպիսկոպոսների ատյանին, եւ Սարգիսը ծեծվել է ու շղթայակապ բանտարկվել: 20 օր անց նրան հաջողվել է փախչել, սակայն նորից է ձերբակալվել եւ միայն հիվանդության պատճառով տեղափոխվել առանձին խուց: Դա եղել է 1788-1790 թվերի միջոցին: Սարգիսը Էջմիածնից Սեւան էր տեղափոխվել եւ երեք տարի ու երեք ամիս մնացել աքսորում: Նա միայն դրսի միջամտությամբ է նորից բերվել Էջմիածին եւ ոչ շատ խիստ պայմաններում մեկ տարի մնալով բանտում՝ կարողացել փախչել եւ եւս մեկ տարի թափառելուց հետո՝ 1796 թվի մայիսի 13-ին, հայտնվել Կ. Պոլսում: Սարգսին հալածելը հենց ցույց է տալիս Ղուկասի՝ հռոմեադավանությունը մերժելը:

Ղուկասի՝ կաթոլիկների հալածիչ լինելն ապացուցելու համար բերվում է ախալցխացի Սահակ քահանայի դեպքը եւս: Սկզբում նա հավատարիմ հայադավան էր, եղել էր Անկոթ Մարտիրոս եպիսկոպոսի աշակերտը եւ գործակցել նրա հետ Ախալցխայում պաշտոնավարելիս: 1776 թվին ձեռնադրվել էր Ախալցխայի քահանա, միշտ դեմ էր եղել կաթոլիկներին, կաթողիկոսի կողմից նշանակվել էր նվիրակ, եւ Զաքարիա պատրիարքը նրան սիրով ընդունել էր: Նա կաթոլիկների հետ առաջին անգամ շփվել էր Կ. Պոլսում 1785 թվին: 1791 թվի Զատկից հետո պատարագելիս կաթողիկոսից առաջ հիշել է Հռոմի պապի անունը: Դա Ախալցխայում, որտեղ կաթոլիկությունն արդեն արմատներ էր ձգել, հուզումների առիթ էր դարձել: Կաթողիկոսն անհապաղ գրել է Հաջի Բաբա վաճառականին, եւ նա էլ փաշայի ձեռքով ձերբակալել էր տվել ըմբոստ քահանային եւ շղթայակապ ուղարկել Էջմիածին: Երեւի Սահակին ոչինչ չասվեր, եթե հայադավաններից զատվեր եւ կաթոլիկ եկեղեցի գնար, բայց հայոց եկեղեցում նրա արածը կանոնազանց ըմբոստություն էր: Ուստի նրան պատժել են, կարգալույծ արել եւ խայտառակել: Նա անգամ բանտարկվել է, սակայն 1792-ին կաթողիկոսը նրան գանակոծելուց եւ գլուխը սափրել տալուց հետո Ախալցխայի փաշայի խնդրանքով թուրքական հագուստ է հագցրել ու հանձնել փաշային: Դա էլ ակնարկ էր, որ թուրքերն են նրան պաշտպանել: Սահակը, սակայն, դեռ Ախալցխա չհասած, մեռել է՝ հավանաբար թունավորվելուց:

Ղուկաս Կարնեցու ջերմեռանդ հայադավանությունը հավաստում են նաեւ 1780 թվի նոյեմբերի 1-ին Ափխազիայի կաթողիկոս Մաքսիմոսին ուղղված շնորհակալական նամակը, Ռուսաստան գաղթած հայերին 1781 թվի դեկտեմբերին ուղղված շրջաբերականը, որով կարգադրվում էր առանց հայրապետական կոնդակի ներկայացող եպիսկոպոսներից ու հոգեւորականներից զգուշանալ, բերիացիներին 1782 թվին ուղղված օրհնության կոնդակը, վրաց թագավոր Հերակլին 1782 թվի մայիսի 20-ին գրած գոհունակության նամակը եւ այլն: Ղուկասի մասին աննպաստ է արտահայտվել, հռոմեադավանության տեսակետից, Մսեր Մսերյանը՝ գրելով, թե նա վատ է վերաբերվել Սահակ եւ Մկրտիչ եպիսկոպոսներին: Իրականում նրանք, օգնելով Ղուկասի ընտրությանը, փորձել են արտոնյալ դիրք ստանալ Մայր Աթոռում: Նրանք կամեցել են հաստատվել Վեհարանում, ինչը կաթողիկոսը չէր կարող եւ չի ներել: Նա այն նույն Սահակն էր, որ հանդգնել էր Զաքարիային ապտակել:

Մսերյանը Ղուկասին մեղադրում է ամբարտավանության եւ ժլատության մեջ: Սակայն նա հավաքված գումարներն աննպատակ ու ապարդյուն չի պահել, այլ ծախսել է շինարարության եւ այլ ձեռնարկների վրա: Պարզապես կաթողիկոսը հուսախաբ է արել այն միաբաններին, որոնք կուզենային Եկեղեցու հասույթներն անաշխատ վայելել: Այլ խոսքով՝ թույլ չի տվել, որ հոգեւորականներն ապիկար հարկահաններ լինեին: Իսկ թե ինչպես վարվեցին նրա թողած գումարների հետ, ապա դա մեղադրանք չի կարող լինել մահացած կաթողիկոսի համար:

Նա լավ տնտեսվար էր, ծախսելու մեջ՝ խոհեմ, գանձելու մեջ՝ հաջողակ, ինչը թելադրված էր ժամանակի պահանջներով եւ իր անձնական ունակություններով:

Ղուկասին մեղադրում են նաեւ այն բանում, որ նրա օրոք դադարեցին գործել Սիմեոնի հիմնած տպարանը եւ թղթի գործարանը: Մեղադրանքը տեղին կլիներ, եթե նա քանդած լիներ այդ հաստատությունները: Ավելին. մինչեւ 1791-ը բազմաթիվ հրատարակություններ է լույս ընծայել տպարանը, եւ միայն Խոյի ու Երեւանի խաների միջեւ սկսված պատերազմների ժամանակ, երբ Էջմիածինն իբրեւ բերդ օգտագործվեց, խափանվեց տպարանի աշխատանքը, որովհետեւ շինության զանազան մասեր այրվեցին ու քանդվեցին: Իսկ հետագա անհանգիստ վիճակը հնարավորություն չտվեց վերականգնելու այդ հաստատությունները, քանի որ դրանք կյանքի կոչելու համար տեղական միջոցները բավարար չէին, իսկ դրսի հետ հարաբերություններն իսպառ դադարել էին: Սակայն այն, ինչ նա չկարողացավ անել Էջմիածնում, արեց Նոր Նախիջեւանում ու Աստրախանում՝ նպաստելով Արղությանի հրատարակչական գործունեությանը, եւ Մադրասում՝ օժանդակելով Շմավոնյանի տպարան հիմնադրելուն: Ղուկասն էր, որ հորդորել էր Հարություն Շմավոնյան քահանային Մադրասում հրատարակել «Ազդարար» հանդեսը, որն սկսեց լույս տեսնել 1794 թվից՝ դառնալով հայ պարբերականների անդրանիկը: Մի հետաքրքիր փաստ եւս: Երբ Աղա Մահմադ խանը թագավորեց, նրա եղբայր Ալիղուլի խանն իր հաճույքի համար կամեցավ հայ աղջիկներին, բացի ամուսնացածներից, Երեւանի խանության տարածքում հավաքել: Լսելով այդ մասին՝ Ղուկասը կարգադրեց ամուսնացնել ութից բարձր տարիքի բոլոր աղջիկներին՝ չնայած աղուհացի օրերին, երբ արգելված էր հարսանիքը: Դա եղավ 1797 թվի Մեծ պահքին:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր

Նա իր ոգու ծիրի մեջ ներառել էր ողջ հայաշխարհը...

Անվանի գիտնական Բաբկեն Հարությունյանի հիշատակին

Հայագիտության եւս մեկ կարկառուն ու երեւելի ներկայացուցիչ պատկանում է արդեն պատմությանը: Ավա՜ղ, անժամանակ իր երկրային կյանքին հրաժեշտ տվեց մեր օրերի ամենանշանավոր պատմաբաններից մեկը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, մի շարք մեդալների, շքանշանների, տիտղոսների ու մրցանակների դափնեկիր, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունի Հարությունյանը:

Նրա արմատները սերում են հինավուրց Վան քաղաքից: Չլիներ 1915 թվականի այդ մեծագույն արհավիրքը, Բաբկեն Հարությունյանը կծնվեր, հասակ կառներ ու կդաստիարակվեր Վանի պատմականորեն հարուստ միջավայրում, կենդանի կերպով կհետազոտեր հարազատ ոստանի հազարամյա անցյալը, ապա կդասավանդեր հայրենի քաղաքի կրթօջախներում:

Նրա ծնողները, եղեռնից մազապուրծ եղած, մի կերպ հասել էին Արեւելյան Հայաստան եւ հանգրվանել որբերով ու գաղթականներով լցված Արարատյան դաշտում:

Ավանդապահ եւ ուսումնասեր վանեցի ծնողների ընտանիքում 1941 թ. մարտի 4-ին լույս աշխարհ է եկել ապագա մեծագույն գիտնականը: 1958 թ. ոսկե մեդալով ավարտել է մայրաքաղաքի լավագույն կրթօջախներից մեկը՝ Հր. Աճառյանի անվան թիվ 72 միջնակարգ դպրոցը, ապա նույն տարում ընդունվել Երեւանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետը: Պետհամալսարանում ուսումնառությունն ավարտել է ժամկետից շուտ՝ 1962 թվականին՝ նույնպես գերազանցության դիպլոմով: 1963-1966 թվականներին ուսանել է նույն բուհի ասպիրանտուրայում, 1968 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Վայոց ձորը հնագույն ժամանակներից մինչեւ 1045 թվականը՝ (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն)» խորագրով:

Սույն շրջանում ծավալած գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ՝ 1972-1977 թթ. սովորել եւ գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը: Բ. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների հիմքում ընկած են պատմաաշխարհագրական, բանասիրական եւ իրավագիտական նախանձելի գիտելիքները, աղբյուրագիտական ու լեզվագիտական բարձր պատրաստությունը, սուր հիշողությունը, հետազոտական ու վերլուծական անուրանալի ձիրքն ու աներեր կամքը: Նա զարմանալի հմտությամբ է կարողացել նախորդ հետազոտողների կողմից անտեսված կամ չնկատված, նույնիսկ աննշան թվացող փաստական նյութը նորովի «խոսեցնել»՝ կատարելով ուշագրավ իրապատում եզրահանգումներ:

Գիտահետազոտական գործունեության սկզբնական փուլում Բ. Հարությունյանը հատուկ ուշադրություն է դարձրել Վայոց ձորի եւ Սյունիքի պատմության քննությանը՝ կատարելով պատմաաշխարհագրական, ժամանակագրական եւ տեղանվանական բնույթի զգալի ու արժեքավոր ճշգրտումներ ու սրբագրումներ:

Հետագայում առավել ընդլայնել է իր գիտահետազոտական աշխատանքների շրջանակը: Գիտնականը տարիներ շարունակ խորությամբ ուսումնասիրել է վաղմիջնադարյան Հայաստանի երկու կարեւոր վավերագրերը՝ «Գահնամակն» ու «Զորանամակը» եւ ապացուցել, որ «Գահնամակն» ստեղծվել է ոչ թե Սահակ Պարթեւի (ինչպես մինչ այդ էր ընդունված), այլ Խոսրով III-ի կողմից՝ խնդիր ունենալով իրավապես ամրագրել 388 թվականին վերամիավորված Մեծ Հայքի թագավորության տարածքային ամբողջականությունը:

Իսկ «Զորանամակի» նորովի քննությունը գիտնականին թույլ է տվել ճշտելու ու ճշգրտելու հայոց արքունի ու նախարարական զինուժի հարաբերակցությունը, մարդպետական ու մաղխազական գնդերի ռազմուժը, ինչպես նաեւ՝ Վիրքն ու Աղվանքը ռազմակալող զորքերի զինուժը:

1993 թ. նա մեծ հաջողությամբ պաշտպանել է տասնամյակների գիտահետազոտական տքնաջան պրպտումների արգասիք հանդիսացող «Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի» դոկտորական ատենախոսությունը:

Ինչպես այլ անվանի հայգետներ, Բ. Հարությունյանը եւս զբաղվել է հայ ժողովրդի կազմավորման ու ձեւավորման հիմնահարցերով: Հիմնավոր կերպով հետազոտելով սույն խնդիրը՝ նա հանգել է այն եզրակացության, որ մեր ժողովրդի կազմավորման համար առանցքային դեր է կատարել Թորգոմի (Թոգարմա) տեղաբնիկ ժողովուրդը: Բազմազան եւ բազմաոատ աղբյուրներով քննելով հայոց հետ սկյութների, մարերի, մուշկերի ու պարսիկների հարաբերությունների հոլովույթը՝ այն կարծիքն է հայտնել, որ Հայաստանի տերիտորիան ամբողջությամբ ընդգրկվել է Աքեմենյան Պարսկաստանի ոչ թե 13-րդ եւ 18-րդ սատրապությունների կազմում, ինչպես ընդունված էր մինչեւ այդ, այլ միայն՝ 13-րդ սատրապության կազմում:

Իր բազմաքանակ հոդվածների եւ ուսումնասիրությունների մեջ անվանի գիտնականը նոր եւ թարմ տեսանկյունից է քննել Արշակունյաց եւ վաղմարզպանական Հայաստանի վարչաքաղաքական կացությունն ու կառուցվածքը, «նախարարության» հաստատությունը, արքունի գործակալությունները, Հայ Առաքելական Եկեղեցու թեմական բաժանումը եւ այլ հիմնահարցեր: Սույն արժեքավոր ուսումնասիրությունների արդյունքում ընդունված շատ դրույթներ հիմնավոր կերպով փաստարկվել են կամ լուսաբանվել ու սրբագրվել արդի հայագիտությանը պատշաճ մակարդակով:

Հայոց պատմության հին ու միջնադարյան շրջանի ուսումնասիրության բնագավառում լուրջ ներդրում են Բ. Հարությունյանի «Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների եւ Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (Ք. ա. VII-VI դարեր)», «Աշխարհացոյց»-ը եւ չորս Հայքերի խնդիրը», «Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի (մասն Ա)» մենագրություններն ու այլ ուսումնասիրություններ:

Բ. Հարությունյանը տարիներ շարունակ նպատակասլաց կերպով զբաղվել է Հայաստանի պատմաաշխարհագրական մի շարք խճողված հիմնահարցերի հետազոտությամբ: Նրա հեղինակությամբ լույս է տեսել «Հայաստանի պատմության ատլասը», որն իրավ գիտական մեծ նվաճում է հայագիտության համար: Բ. Հարությունյանը նաեւ «Լեռնային Ղարաբաղի հանրապետություն» եռալեզու ատլասի հեղինակներից է:

Մեծանուն հայագետն իր գիտամանկավարժական գործունեության ընթացքում մշտապես պայքար է տարել Թուրքիայում եւ Ադրբեջանում պետական մակարդակի վրա դրված հայոց պատմության կեղծարարության ու նենգամիտ աղավաղումների դեմ եւ արժանի հակահարված տվել: Այս առումով ուշագրավ հրապարակումներով հանդես է եկել նաեւ օտարալեզու մամուլում:

Մեծ է անվանի գիտնականի ներդրումը հայոց պատմությունը մատաղ սերունդներին ճշմարտացի եւ մատչելի հասցնելու գործում: Այդ են վկայում նրա անմիջական խմբագրությամբ եւ հեղինակությամբ լույս տեսած դպրոցական դասագրքերն ու ձեռնարկները:

Բ. Հարությունյանը տասնամյակների անբասիր մանկավարժական գործունեությամբ ձեռք է բերել ճանաչված եւ սիրված դասախոսի վարք ու համբավ: Նա 1969 թվականից մինչեւ իր կյանքի ավարտը դասավանդել է հանրապետության մայր բուհում՝ պետհամալսարանում, որտեղ վարել է մի շարք բարձր վարչական պաշտոններ: Հատկապես պետք է հիշատակել, որ 1993-2004 թվականներին եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանը, միաժամանակ 1997-2000 թթ. համատեղել ԵՊՀ հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչի պաշտոնը, իսկ 2003-2013 թթ. եղել հայոց պատմության ամբիոնի վարիչը:

Արժանացել է պետական պարգեւների, պատվոգրերի, շքանշանների ու մեդալների:

Սակայն այդ ամենից զատ, նա արժանացել էր ամենից կարեւոր ձեռքբերմանը՝ իր ժողովրդի անվերապահ համակրանքին, հարգանքին ու սիրուն, մի գնահատական, որից բարձր այլեւս որեւէ պարգեւ եւ կոչում չկա:

Մեծագույն հայագետը ողջ գործունեության ընթացքում ոգու ծիրի մեջ ներառած ամբողջ հայաշխարհը՝ իր գիտական ու մարդկային համայն ներուժը ծառայեցրեց հայոց հայրենիքի ճշմարիտ ու ճշգրիտ պատկերի հստակեցմանն ու ամբողջականացմանը:

Ներկա ու գալիք սերունդների ակնածանքն ու երախտագիտությունն է մշտապես ուղղեկից լինելու նրա անվանն ու հիշատակին:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԿԻՍ սեղյակում

ԵՐԳՈՎ ԾԱՌԱՅԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Մեր հյուրն է «Հավատամք» հոգեւոր կենտրոնի քարոզչական գրասենյակի պատասխանատու Սասուն ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

- Ասում են՝ երգը միավորում է մարդկանց: Երգն ազգություն չի ճանաչում: Երգը նվաճում է սրտեր: Երգով հաղթանակներ են ձեռք բերվում: Երգով ծառայում են Աստծուն: Կարծում եմ՝ այս սկզբունքով եք առաջնորդվել՝ մասնակցելով փառատոնին:

- Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան եպս Ժամկոչյանի տնօրինությամբ եւ Մայր Եկեղեցու «Հավատամք» հոգեւոր կենտրոնի հոգեւոր հովիվ Հակոբ քհն. Խաչատրյանի նախաձեռնությամբ եւ գլխավորությամբ՝ «Հավատամք» հոգեւոր կենտրոնի պատվիրակությունը մեկնեց Բելառուս՝ մասնակցելու «Коложский Благовест» միջազգային 13-րդ փառատոնին: Խմբի կազմում էին «Հավատամք» երգչախմբի 15 անդամները, խմբավար Ռաֆֆի Միքայելյանը, դաշնակահարուհի Ռուզաննա Գրիգորյանը, «Հավատամք» հոգեւոր կենտրոնի մշակութային բաժնի պատասխանատու, երեցկին Նարինե Դարբինյանը, համացանցային քարոզչության գրասենյակի անդամներ եւ ՁԼՄ-ի ներկայացուցիչներ: Երգչախումբն առաջին անգամ էր մասնակցում փառատոնին եւ մեծ պատասխանատվությամբ էր նախապատրաստվել: Իհարկե, Աստծո հադեպ ունեցած սերն էր առաջնորդում բոլորիս: Բացի հայ հոգեւոր եւ ազգային երգերից՝ երգացանկում կային նաեւ այլ լեզուներով՝ ռուսերեն, բելառուսերեն, լեհերեն, հունարեն հոգեւոր երգեր:

*2014-ին Բելառուսի Գրոդնո քաղաքը հայտարարվել է երկրի «Մշակութային մայրաքաղաք», որտեղ փետրվարի 19-22-ն անցկացվում էր «Коложский Благовест» («Կոլոժսկյան զանգ») **Ուղղափառ Եկեղեցիների երգեցողության** միջազգային 13-րդ փառատոնը: Այն համարվել է փետրվար ամսվա գլխավոր իրադարձությունը: Առաջին փառատոնը տեղի է ունեցել 2002 թվականին, որը համընկնում էր Գրոդնոյի թեմի վերածննդի 10-ամյա հոբելյանին:*

Նեմանի ափին գտնվող Սբ Բորիսո-Գլեբսկյան (Կոլոժսկյան) եկեղեցին Գրոդնոյի հինգ եկեղեցիներից մեկն է, որը, որպես մոնղոլական արշավանքից առաջ մնացած ճարտարապետական կառույց, առ այսօր պահպանվում է: Ռուս գրականության մեջ այս եկեղեցու մասին առաջին հիշատակությունը պատկանում է տարեգիր Իպատեւսկուն, ով 1183 թվականին գրել է Գրոդնոյի քարե եկեղեցու հիդեհվելու մասին: Այնուհետեւ լքված եկեղեցու շրջակայքում թաղման արարողություններ են կատարվել: 16-րդ դարում այն որոշ չափով վերականգնվել է Բոգուշ Բոգուվիտինովիչի կողմից: Ի պատիվ այդ հինավուրց եկեղեցու է այս փառատոնի անվանումը, որին մասնակցում էր 6 երկիր (Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան, Լեհաստան, Ռումինիա, Բելառուս)՝ 30 երգչախմբով:

Շարունակությունը՝ էջ 8

Քլայվ Լուիս

ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Նվիրվում է Տ. Թոլկիենին (անգլիացի գրող, բանաստեղծ, բանասեր)

Սկիզբը՝ թիվ 3-5

Բրիտանացի հանրահայտ գրող Քլայվ Լուիսի վերոհիշյալ գործը քրիստոնեական թեմաներով երգիծական մի ստեղծագործություն է, որ ներկայացնում է Խառնակիչ կոչվող դեւի նամակները նրա զարմիկ Օշինդրին: «Խառնակչի նամակները» ստեղծագործությունը՝ որպես առանձին գիրք, առաջին անգամ հրատարակվել է 1942 թվականին:

6.

Իմ սիրելի Օշինդրիկ,

Ուրախ եմ լսելու, որ խնամարկյալիդ տարիքն ու մասնագիտությունը հնարավոր են դարձնում, որ նա զինվորական ծառայության կանչվի, թեեւ սա դեռ որոշված չէ: Մենք ցանկանում ենք, որ նա առավելագույն անորոշության մեջ գտնվի, որպեսզի նրա միտքը լցվի ապագայի հակասական պատկերներով, որոնցից յուրաքանչյուրը կամ հույս, կամ վախ է ներշնչում: Տագնապից կամ անհանգստությունից ավելի լավ բան չկա մարդկային միտքը Թշնամուց պատնեշելու համար: Նա ուզում է, որ մարդիկ հոգան այն մասին, ինչ ներկայում են անում, իսկ մեր գործն է շարունակաբար մտածել տալ, թե ինչ է ապագայո՛ւմ պատահելու նրանց: Քո խնամարկյալը, անշուշտ, կհասկանա այն միտքը, որ պետք է համբերությամբ հանձնվել մեր Թշնամու կամքին: Ինչ որ Թշնամին այդ մտքով նկատի ունի, գլխավորապես այն է, որ մարդը համբերությամբ պետք է ընդունի այն նեղությունը, որն արդեն նրան բաժին է ընկել՝ ներկայի՛ս անհանգստությունն ու տագնապը: Սա նշանակում է, որ նա պիտի ասի. «Թող Քո կամքը լինի», եւ սա կրելու առօրյա պարտականությունը հանձն առնի, որպեսզի ամենօրյա հացը ստանա: Ուստի քո գործն է այնպես անել, որ խնամարկյալդ երբեք չմտածի ներկայում առկա վախի մասին որպես իրեն բաժին ընկած խաչի, այլ միայն այն բաների մասին, որոնցից վախենում է:

Թող նա դրանք իր խաչերը համարի: Թող մոռանա, որ, անհամատեղելի լինելով, դրանք բոլորը միասին չեն կարող պատահել իրեն, եւ թող փորձի նախօրո՛ք վարժեցնել իրեն դրանց մեջ ամրապինդ ու համբերատար լինելու: Համարյա անհնար է միաժամանակ իրապես հանձնվել տասնյակ տարբեր ու ենթադրական ճակատագիրների, եւ Թշնամին մեծ օգնություն չի մատուցում նրանց, ովքեր փորձում են այդպես վարվել. ներկա եւ իրական տառապանքին հանձնվելը, նույնիսկ եթե այդ տառապանքը վախն է, շատ ավելի թեթեւ է եւ սովորաբար օգնություն է ստանում այս ուղղակի գործողությամբ: Ես բացատրել եմ, որ դու կարող ես թուլացնել նրա աղոթքները նրա ուշադրությունը շեղելով անմիջապես Թշնամուց դեպի Թշնամու մասին նրա սեփական մտածությունները: Մյուս կողմից՝ վախը հեշտությամբ է կառավարվում, երբ խնամարկյալի միտքը շեղվում է վախի առարկայից դեպի հենց վախը, որը նա համարում է իր մտքի ներկա եւ անցանկալի վիճակ: Եվ երբ նա այդ վախը համարի իրեն բաժին ընկած խաչը, անխուսափելիորեն կմտածի, որ դա իր մտքի վիճակն է: Հետեւաբար, կարելի է ընդհանուր կանոն սահմանել. մտքի այն բոլոր գործողություններում, որոնք նպաստավոր են մեր գործի համար, քաջալերիր խնամարկյալին անինքնագիտակից լինել եւ կենտրոնանալ արտաքին առարկայի վրա, իսկ Թշնամու համար նպաստավոր բոլոր գործողություններում նրա միտքը դեպի ներս հետ շրջիր: Թող ինչ-որ վիրավորանք կամ կնոջ մարմին դրսից այնպես գրավի նրա ուշադրությունը, որ նա չմտածի թե՝ «Այս պահին ես բարկություն (կամ ցանկական կիրք) կոչվող վիճակի մեջ եմ մտնում»: Եվ հակառակը՝ մտածությունը թե՝ «Այժմ ավելի ու ավելի եմ լցվում ջերմեռանդության կամ գթասրտության զգացումներով», թող այնպես նրա ուշադրությունը ներս մղի, որ նա այլեւս իրենից այն կողմ չտեսնի ոչ մեր Թշնամուն, ոչ իր մերձավորներին:

Ինչ վերաբերում է պատերազմի հանդեպ նրա ընդհանուր վերաբերմունքին, դու չպետք է շատ հույս դնես ատելության այն զգացումի վրա, որով մարդիկ այնքան սիրում են քննարկումներ կատարել քրիստոնեական կամ հակաքրիստոնեական պարբերականներում: Ցավ ապրող խնամարկյալն անշուշտ կարող է քաջալերվել որոշ քինախնդրական զգացումներով, իր համար վրեժ լուծել գերմանացիների պարագլուխներից, եւ դա լավ է այդ պահին: Բայց դա սովորաբար խիստ զգացմունքային կամ առասպելական ատելություն է՝ ուղղված երեւակայական թողության նոխազների դեմ: Նա այդ մարդկանց երբեք չի հանդիպել իրական կյանքում. դրանք կերպարներ են, որոնք ձեւավորվել են թերթերում նրա կարդացածի հիման վրա: Այսպիսի անիրական ատելության արդյունքը հաճախ հիասթափեցնող է, եւ այս առումով՝ բոլոր մարդկանց մեջ ամենաողորմելի փալասներն անգլիացիք են:

Դրանք ողորմելի արարածների այն տեսակին են պատկանում, որը բարձրաձայն հայտարարում է, թե իր թշնամիները կտտանքների են արժանի, բայց հետո թեյ ու ծխախոտի գլանակներ է մատուցում առաջին իսկ վիրավոր գերմանացի օդաչուին, որ հայտնվում է սեւ դռնից:

Ինչ ուզում ես արա, խնամարկյալիդ հոգում կլինեն որոշ չափով թե՛ գթասրտություն, թե՛ դաժանություն: Մեծ բան կլինի, եթե ուղղես այդ դաժանությունը դեպի նրա անմիջական հարեւանները, որոնց նա հանդիպում է ամեն օր, եւ նրա գթասրտությունը տանես-հասցնես հեռավոր տարածքներում գտնվող այն մարդկանց, ում նա չի ճանաչում: Այսպիսով դաժանությունն ամբողջապես իրական է դառնում, իսկ գթասրտությունը՝ մեծապես երեւակայական: Ոչ մի լավ բան չկա գերմանացիների հանդեպ նրա ատելությունը բորբոքելու մեջ, եթե միաժամանակ գթասրտության վտանգավոր սովորություն է արմատանում նրա եւ նրա մոր, նրա աշխատողի եւ գնացքում նրան հանդիպող մարդու միջեւ: Քո այդ մարդուն պատկերացրու որպես նույնակենտրոն շրջանների շարք, որում ամենակենտրոնում նրա կամքն է, հետո գալիս է միտքը, եւ վերջապես՝ երեւակայությունը: Դու չես կարող հուսալ, թե կարող ես միանգամից վերացնել այդ բոլոր շրջաններից այն ամենը, որից Թշնամու հոտն է գալիս: Բայց դու պետք է շարունակես դեպի դուրս մղել բոլոր առաքինությունները, մինչեւ նրանք վերջապես տեղավորվեն երեւակայության շրջանում, իսկ մեզ համար ցանկալի բոլոր որակները պիտի մղես ներս՝ դեպի կամքը: Առաքինությունները միայն այն ժամանակ են իսկապես ճակատագրական մեզ համար, երբ հասնում են կամքին եւ այնտեղ մարմնանում սովորությունների մեջ (ես, իհարկե, նկատի չունեմ այն, ինչ խնամարկյալը սխալմամբ կամք է համարում՝ որոշումների կայացման մեջ գիտակցական բորբոքումն ու ատամների ամուր սեղմումը, այլ իրական կենտրոնը, որը Թշնամին Սիրտ է կոչում): Երեւակայության մեջ նկարված կամ մտքից հավանության արժանացած կամ նույնիսկ ինչ-որ չափով սիրված ու մեծարված բոլոր առաքինությունները մարդուն հեռու չեն պահի մեր Հոր տնից. դրանք նրան կարող են նույնիսկ ավելի զվարճալի դարձնել, երբ նա տեղ հասնի:

Քո սիրառատ քեռի՝
ԽԱՌՆԱԿԻՉ

7.

Իմ սիրելի Օշինդրիկ,

Մտածում եմ՝ պե՞տք է դու հարցնես ինձ, թե էական նշանակություն ունի՞ խնամարկյալին քո գոյության մասին անգիտության մեջ պահելը, թե ոչ: Այդ հարցի պատասխանը, գոնե պայքարի ներկա փուլում, մեզ տվել է Գերագույն հրամանատարությունը: Մեր քաղաքականությունը ներկա պահին մեզ ծածուկ պահելն է: Իհարկե, սա միշտ այսպես չի եղել: Մենք երկու քարի արանքում ենք հայտնված: Մի կողմից՝ երբ մարդիկ չեն հավատում մեր գոյությանը, մենք կորցնում ենք ուղղակի ահաբեկչության բոլոր հաճելի արդյունքները եւ մարդկանց չենք դարձնում մոգությամբ զբաղվողներ: Մյուս կողմից՝ երբ նրանք հավատում են մեր գոյությանը, մենք չենք կարողանում նրանց մատերիալիստ եւ կասկածող դարձնել: Գոնե ո՛չ դեռեւս: Ես մեծ հույսեր եմ փայփայում, որ մենք պատշաճ ժամանակին կսովորենք նրանց գիտությունն այն աստիճան զգացմունքայնացնել եւ առասպելականացնել, որ այն, ինչ իր ազդեցությամբ այլ բան չէ, քան մեր հանդեպ հավատը (թեեւ ո՛չ այդ անվամբ), ներս կսողոսկի, իսկ մեր Թշնամու հանդեպ հավատի դեմ մարդկային միտքը փակ կմնա:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՐԵՆԻՔ. ԲԱՆՔ ՀԱՅՈՑ

Ա. Հայոց հայրենիք եւ հայ գրականություն

(պատմական ակնարկ)

Սկիզբը՝ էջ 4

«Հայ գրականություն» ամսօրյա հանդեսը ելս խմբագիր **Սուրեն Պարթեւյանի** համանուն խոսքում նույնն է ասում՝ քաղաքականությունը փակել է գրականության ճանապարհները. *«Կարծես թե Տիկին Քաղաքանությունը նախանձահույս մրցակցության մը ելած է մեր մեջ Տիկին Գրականության դեմ, անոր սիրահարները ձեռքեն խլելու <...>: Ազգ մը իր գիրքերեն եւ գիրքերուն մեջ կ'ապրի, մենք միայն ջարդերու, ստեղծելու առջեւ մտահոգվիլ գիտենք: Կոտորվելով չի լմննար սակայն ազգ մը, այլ իր հոգեկան նկարագիրը կորսնցնելով: Այս համոզումով է, որ մենք նվիրական կը նկատենք ամեն ջանք, որ կուգա ի սպաս դրվիլ Հայ գրականության վերականգնումին: Միջակություններու մշտահոդ հոսանք կեցնել, զտումի ու բյուրեղացումի գործը դյուրացնել, հանգրվան ու հենարան ընծայել ճշմարիտ տաղանդներուն»* («Հայ գրականություն», հանդես ամսօրյա, Ա տարի, 1911, թիվ 1, 1-14 հուլիս): Դարձյալ տաղանդավոր գրքերով ու արվեստով ազգը ոտքի կանգնեցնելու ծրագիր, ընդդեմ կոտորածների՝ պահպանելու ազգի հոգեկան նկարագիրը: Ինչ պարբերականի առաջին էջին է՝ նույնը նաեւ վերջին էջին է. Ըստ որի՝ ամսաթերթը հիմնված է ի հայտ բերելու «անշքացած հայ մտքի ստեղծագործությունը», «պիտի աշխատի ցոլացնել տիեզերական ընդհանուր առաջադիմության ոգին <...>, ժամադրավայրը պիտի ըլլա գեղեցիկին, ճշմարտին եւ բարվոյն»: Հայտնի դատողություն է՝ գեղեցիկը կփրկի աշխարհը: Եթե այդպես է, ապա գեղեցիկը կփրկի նաեւ Հայաստանը: Այդ իսկ տրամաբանությամբ՝ որքան տաղանդավոր գործեր, այնքան լավ: Այս տեսակետից, ահա, խոչընդոտ են նաեւ միջակությունները:

Մի կողմից համիդյան ջարդերի, մյուս կողմից նոր սահմանադրության խոստումների արանքում հայ գրողը խոսում է ապրելու գիտության մասին. «Ապրելու գիտություն մը կրնա ըլլալ, ինչպես կա գրելու գիտություն մը...» (Ա. Հարությունյան, «Հակասություններ», «Հայ գրականություն», 1911, թիվ 5, 1-14 նոյեմբեր):

Այս ամենը տանում է դեպի ազգաբանություն՝ ինչպե՞ս ապրել, ո՞րն է հայ մարդու կյանքի գերագույն նպատակը: Չմոռանանք, որ այս տարիներին շարունակվում է դեռեւս անցյալ դարավերջից սկսած հայության արտահոսքը մայր երկրից: Դրա անդրադարձն է Զ. Եսայանի «Գաղթականներ» գրությունը («Հայ գրականություն», 1911, թիվ 6, 15-30 նոյեմբեր), ինչի մեջ հայության արտահոսքի պատկերն է դեպի նոր Աշխարհ՝ ԱՄՆ:

Հարցը պարզ էր բոլորին. կա՛մ մնալ՝ երկի՛րը պաշտպանել, կա՛մ գնալ՝ կյանքը փրկել: Այս երկվության պատասխանն է Գրիգոր Արծրունու «Մենք ստրուկներ ենք» հայաքննությունը. *«Հայը սեր չունի դեպի իր ազգությունը՝ նա իրան երբեք չի զոհի ազգության համար: Հայի սերը դեպի իր նմանները կեղծավոր է, սուտ է»* («Հայ գրականություն», 1912, թիվ 2, 1-14 սեպտեմբեր): Այսպես ազգն ու գրականությունը կանգնում են նախ մեկը մյուսին ճանաչելու, հարաբերություններ ճշտելու եւ ապա ով ում առաջնորդելու անհրաժեշտության առջեւ:

Հակոբ Օշական

Հակոբ Օշականը գրախոսում է Մոսկվայում լույս տեսած «Գարուն» տարեգրքի Գ հատորը (ինչի նախորդ երկու գրքերում ինքը եւս գեղարվեստական նյութեր ունի) եւ գրում. *«Հովհաննես Թումանյանը մեր ամենամեծ բանաստեղծն է դյուցազներգության սեռին մեջ: Ասիկա կը խոստովանիմ հայտնի հպարտությունով մը: Հովհաննես Թումանյանը ցեղին հոգիեն կու գա, կու գա իր երեց եղբայրներեն, կու գա Նարեկացիեն, Քուչակեն, Աբովյանեն»* («Հայ գրականություն», 1912, թիվ 4, 1-14 նոյեմբեր): Օշականը ծաղրում է հայ քննադատության հասարակագիտական կողմնորոշումը, որ իշխում էր արեւելահայ հատվածում: Այդ քննադատությունը համարում է «հասարակամոլ եւ հավակնոտ», «ահարկու պոռոտախոսություն եւ անիմաստ սոփեստություն» եւ ցանկություն հայտնում հասարակականի փոխարեն անհատականություններ վերլուծել («Հայ գրականություն», 1912, թիվ 5, 1-14 դեկտեմբեր):

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Բ. Ի. ԳԼԱՏԿՈՎ

ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԸ

Սկիզբը՝ թիվ 4-5

«Սա նշանակում է, որ մոլուցքով ձեռք բերված հարստությունն անիրավ է կամ պիղծ, քանի որ ըստ սրբազան խոսքի՝ մոլարն առհասարակ կարող է նշանակել պիղծ, ինչպես եւ ճշմարտությունը՝ սովորաբար բարիք: Այսպիսով, ի՞նչ է նշանակում այն հորդորը, թե անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք: Սա նշանակում է՝ մոլուցքով ձեռք բերված հարստությունը, որ ձեզ համար հեշտությամբ դառնում է մամոնական անիրավություն, պղծության առարկա, կուռք, կարող եք, աղքատներին օգնություն ցույց տալով, վերածել բարության տենչի եւ ձեռք բերել հոգեւոր բարեկամներ ու աղոթողներ: Իսկ ինչ վերաբերում է այն հարուստներին, որոնք ոչ միայն ազատ չեն հարստություն դիզելու իրենց մոլուցքից, այլեւ անարդարը չարաշահելով՝ ծանրացրել են իրենց մեղքը, ապա զուր են փնտրում Անիրավ տնտեսի առակում իրենց անիրավությունը ծածկելու հեշտին միջոցներ: Սակայն եթե ցանկանում են ճշմարիտ, ուղղակիորեն իրենց հասցեագրված հորդորներ, ապա կգտնեն Զակքեոս հարկահավաքի մասին խրատում»:

Այս մեկնության ամփոփումը միանգամայն ճշմարիտ է, սակայն, ցավոք, սրբազանը չի բացատրում, թե ինչու այդ եզրափակումը պետք է համարել անհրաժեշտ հետեւություն առակի ողջ բովանդակության: Առակի անիրավ տնտեսը հակված չէր «մամոնական անիրավությանը», ինչի մասին խոսում է սրբազանը, այլ այդ «անիրավության չարաշահմանը», որն իր իսկ վստահեցմամբ՝ չի կարող հովանի լինել առակում նշված միջոցի: Ուստի սրբազանի վերջնական եզրակացությունը չի կարող առակի բուն էության տրամաբանական հետեւությունը լինել, եթե այն հասկանանք այնպես, ինչպես նա էր հասկանում: Բացի դա՝ այդ մեկնությունը չի տալիս գլխավոր հարցերի ու թյուրըմբռնումների պատասխանները, որոնք ծագում են առակն ընթերցելիս:

Որոշ մեկնողներ կարծում են, որ մեղավոր մարդը, այսպես կոչված՝ հարուստը,

ով ոչ մի բարի գործ չի կատարել՝ արդարացնելու համար իր մեղսալի կյանքը, կարող է իր անիրավ հարստությունն օգտագործել ի բարօրություն կարիքավորների եւ ձեռք բերել բարեկամներ՝ Աստծո առաջ իր համար բարեխոսներ: Եթե նման մեկը գիտակցի իր կյանքի ողջ մեղսալիությունը եւ իր հանցանքները թաքցնելու փոխարեն բոլորի առջեւ բացի իր հոգու ողջ մեղքերը, նրանց ներկայացնի իր կյանքի այն ողջ սարսափելիությունն ու կործանարարությունը եւ դրանով նրանց զերծ պահի իրեն եւ իր նման մեղավորներին նմանվելուց, ապա շատերը կխուսափեն մեղք գործելուց: Նման զգուշացումով, նրանց այդ կերպ փրկելով՝ անկեծ մեղավորը բարի գործ կատարած կլինի եւ որպես բարեկամներ կշահի մարդկանց, եւ այդ բարեկամները Երկնային Հորը կխնդրեն, որ ների նրան: Անկասկած նման մեղավորն անկեղծորեն զղջում է, եթե ի տես ամենքի է ապաշխարում. նման ապաշխարության համար նա արժանի է ներման՝ անառակ որդու պես: Եթե նա իր բացահայտ ապաշխարությամբ նաեւ ուրիշներին է հետ պահում մեղք գործելուց, ապա նրանց հանդեպ կատարում է բարի գործ, այսինքն՝ ստեղծում է ապաշխարությանը արժանի պտուղ, այդ իսկ պատճառով կարող է ընդունվել հավիտենական օթեւան՝ չնայած իր բազում մեղքերի: Այսպիսով, այս մեկնությունը միանգամայն համահունչ է Քրիստոսի ուսմունքի ոգուն, սակայն, ցավոք, այն չի կարելի մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող առակի համար անգամ մեկնություն կոչել: Անիրավ տնտեսն իր տիրոջ ունեցվածքը կառավարելու շրջանում, իր հոգու վրա շատ մեղքեր էր բարդել, եւ եթե ապաշխարում էլ էր, ապա միայն Աստծո եւ իր խղճի առաջ. ոչ մի մարդու նա իր մեղքերի մասին չի խոստովանել, ոչ մեկի առաջ չի բացել մեղքերից վիրավոր իր հոգին, ոչ մեկին մեղքերից հետ չի պահել: Այդ իսկ պատճառով առաջարկվող մեկնությունը չի կարելի ճիշտ համարել:

Անիրավ տնտեսի մասին առակի մեկնությունները շատ-շատ են, բայց քանի որ նրանցից ոչ մեկը մեր նշած հարցերին չի տալիս հստակ, ստուգիվ պատասխան, ուստի դրանց մասին այստեղ չեմ խոսելու, միայն կսահմանափակվեմ այս առակի մասին աստվածաբանների շրջանակում խիստ տարածված կարծիքով:

Նրանք կարծում են, որ տնտես ունեցող տիրոջ կերպարի տակ պետք է ենթադրել հենց Աստծուն, իսկ անիրավ տնտեսինը՝ մարդկանց, որոնք օգտագործում են Աստծո կողմից իրենց շնորհված հարստությունը՝ ոչ համաձայն Աստծո կամքի, այսինքն՝ չեն օգնում իրենց կարիքավոր մերձավորներին: Առակի տիրոջ՝ տնտեսից պատասխան տալու պահանջը հավասարեցվում է հավիտենություն փոխադրվող յուրաքանչյուր մարդուց պատասխան տալու՝ Աստծո պահանջին: Պարտապաններ ասելով՝ ենթադրում են կողմնակի օգնություն հայցող բոլոր կարիքավորներին, իսկ բարեկամները, որոնք իրենց հարկի տակ ընդունում են պաշտոնաթող տնտեսին, հրեշտակներն ու Աստծո արդարներն են:

Ըստ այն հիմնավորումների, որոնք պետք է բերվեն ստորեւ, այս մեկնությունը եւս բացատրություն չի տալիս շատ կնճռոտ խնդիրների: Վերջերս «Церковные Ведомости», 1911 թ. 1-9 համարներում տպագրվեց ավգ քահանա, պրոֆեսոր Տ. Բուտկեւիչի՝ անիրավ տնտեսի մասին առակի բացատրությունը:

Մեկնելով սույն առակը՝ պրոֆեսոր Տ. Բուտկեւիչը հարց է տալիս. «Ինչո՞ւ տերն իր անհավատարիմ տնտեսին ոչ միայն դատի չտվեց, այլեւ նրան դրվատեց»:

Բուտկեւիչը, որպեսզի տա այդ հարցին պատասխան, նախապես եւ ամենայն մանրամասնորեն խոսում է հրեական հարուստների եւ նրանց տնտեսների մասին. «Պետք է ընդունել այն անառարկելի փաստը, որ հրեաները, առավել քան մյուս ազգերը, մշտապես առանձնացել են շահասիրական ու ընչաքաղցության մոլուցքով: Մովսեսից սկսած՝ բոլոր հինկտակարանյան հեղինակները, առավելապես Դավիթը, Սողոմոնը, Սիրաքի որդի Հիսուսը եւ մարգարեները հաստատում են, որ դեռեւս հին հրեաները, մոռանալով Եհովային եւ Նրա պատվիրանները, հաճախ ամեն միջոցի դիմում էին հարստանալու համար. նրանք չէին խորշում խաբեությունից, գողությունից, հաճախ ավազակաբար հարձակվում ու թալանում էին վաճառականների քարավանները: Հրեաների միջավայրում առանձնապես տարածված էին վերավաճառքն ու վաշխառությունը. հարյուր տոկոսով փոխառություն տալն ասես հիմնավորված էր ոչ ծանր պայմանների դեպքում: Եթե 5 տաղանդ էին տալիս՝ կրկնակին ստանալու ակնկալիքով, հրեաներին սա չէր զարմացնում, այլ ձգտում էին նրան, որ 2 քանքարը նրանց բերեր 10-ը (Մատթ. ԻԵ 20, Ղուկ. ԺԹ 16): Փոխառությունն ամրագրվում էր ոչ միայն տեղեկանքով եւ պարտապանի վստահագրով, այլեւ այլ անձերի երաշխավորագրերով: Եթե պարտապանի ունեցվածքը չէր բավարարում պարտքը մարելու համար, ապա վարկատուն կարող էր բանտ գցել տար նրան կամ նրա ողջ ընտանիքը դարձնել իր հավիտենական ճորտը»:

Շարունակելի

Թարգմանությունը՝
Ա. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ

Քլայվ ԼՈՒԻՍ

ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 6

Սրանում օգտակար կարող են լինել «կյանքի զորությունը»՝ սեքսի պաշտամունքը, եւ հոգեվերլուծության որոշ կողմեր: Երբ մենք կարողանանք ստեղծել մեր կատարյալ աշխատանքը՝ մատերիալիստ մոգին՝ այն մարդուն, ով չի գործածում, բայց ճշմարտապես երկրպագում է նրան, ինչը նա անորոշ կերպով «զորություններ» է կոչում՝ միաժամանակ ուրանալով «հոգիների» գոյությունը, ահա այդ ժամանակ պատերազմի ավարտը տեսանելի կդառնա: Իսկ մինչ այդ մենք պետք է հնազանդվենք մեր կարգերին: Ես չեմ կարծում՝ դու շատ կդժվարանաս խավարի մեջ պահել խնամարկյալիդ: Այն փաստը, որ «դեւերը» գլխավորապես երգիծական կերպարներ են ժամանակակից երեւակայության մեջ, կօգնի քեզ: Եթե քո գոյության մի թույլ կասկած սկսի ծագել խնամարկյալիդ մտքում, առաջարկիր նրան կարմիր զուգագուլպաներով մի դեւի պատկեր եւ համոզիր նրան, որ, քանի որ ինքը չի կարող հավատալ այդպիսի էակի գոյությանը (սա հին դասագրքերում ներկայացվող շփոթեցնող միջոց է), նա չի կարող հավատալ քեզ:

Ես չեմ մոռացել իմ խոստումը՝ մտածելու, թե ինչ դարձնենք խնամարկյալիդ՝ մոլի հայրենասե՞ր, թե ծայրահեղ խաղաղասեր: Բոլոր տեսակի ծայրահեղություններն էլ, բացի Թշնամու հանդեպ ծայրահեղ նվիրումից, պետք է քաջալերվեն: Իհարկե ո՛չ միշտ, բայց այս շրջանում պետք է: Որոշ տարիքներ գաղջ ու ինքնահավան են, եւ մեր գործն է այդ տարիքում գտնվողներին ավելի արագ քնեցնել: Այլ տարիքներ, որոնցից է եւ այս մեկը, անհավասարակշիռ են եւ հակում ունեն խմբակներ ձեւավորելու, եւ մեր գործն է սատարել դրան: Ամեն փոքր խմբակի անդամներ, միավորված ինչ-որ հետաքրքրության շուրջ, որն այլ մարդիկ չեն հավանում կամ արհամարհում են, միտում ունեն ներսում ստեղծելու փոխադարձ հիացմունքի եւ արտաքին աշխարհի հանդեպ մեծ հպարտության ու ատելության բարեպաստ մթնոլորտ, որն անամոթաբար փայփայվում է, որովհետեւ արդարացվում է «նպատակով» եւ վերանձնական համարվում: Սա ճիշտ է, նույնիսկ երբ փոքր խմբակը սկզբնապես ստեղծվել է Թշնամու նպատակների համար: Մենք ուզում ենք, որ Եկեղեցին փոքր մնա ոչ միայն նրանով, որ ավելի քիչ մարդիկ ճանաչեն Թշնամուն, այլեւ որ նրանք, ովքեր ճանաչում են, ձեռք բերեն գաղտնի հանրությանը կամ խմբավորմանը հատուկ անհանգիստ մոլեռանդություն ու պաշտպանողական ինքնահավանություն: Եկեղեցին ինքն էլ, իհարկե, լավ պաշտպանվում է, եւ մենք դեռ երբեք չենք հաջողել նրան խմբավորման բոլոր բնութագծերով օժտելու մեջ: Բայց նրանում ձեւավորված խմբավորումները հաճախ հիանալի արդյունք են տվել՝ Կորնթոսում Պողոսի եւ Ապողոսի կուսակցություններից մինչեւ Անգլիայի Եկեղեցու «վերին» եւ «ստորին» կուսակցությունները:

Եթե կարողանաս խնամարկյալիդ դարձնել ազնիվ բողոքավոր, նա մեքենաբար կգտնի իր համար մի փոքր, կազմակերպված, ոչ շատ տարածված խմբավորում, եւ սրա ազդեցությունը նրա վրա, ով դեռեւս նորադարձ է քրիստոնեության մեջ, համարյա վստահաբար լավը կլինի: Բայց միայն համարյա՛ վստահաբար: Նախքան ներկա պատերազմում ծառայության կանչվելը նա լուրջ կասկածներ ունեցե՞լ է արդար պատերազմում կռվելու օրինականության վերաբերյալ: Արդյո՞ք նա ֆիզիկական մեծ քաջությամբ օժտված տղամարդ է, այնքան մեծ, որ չի ունենա կիսագիտակից վախեր իր խաղաղասիրության իրական շարժառիթների մասին: Կարո՞ղ է նա, երբ հնարավորինս ազնիվ է (ոչ մի մարդ երբեք շատ ազնիվ չի լինում), լիովին համոզված լինել, որ բացառապես գործել է Թշնամուն հնազանդվելու փափագից: Եթե նա այդպիսի մարդ է, նրա խաղաղասիրությունը մեզ շատ օգուտ չի տա, եւ Թշնամին, ամենայն հավանականությամբ, կպաշտպանի նրան աղանդի հետեւորդ լինելու սովորական հետեւանքներից: Քո լավագույն ծրագիրն այդ դեպքում կլինի փորձել հանկարծակի, շփոթեցնող, զգացմունքային անկում ստեղծել, որը նրան կստիպի դեպի հայրենասիրություն մղվել: Այսպիսի բաները հաճախ կարելի է գլուխ բերել: Բայց եթե նա այնպիսի մարդ է, ինչպիսին ես եմ պատկերացնում նրան, փորձիր խաղաղասիրությունը:

Որ ուղղությունն էլ նա բռնի, քո գլխավոր գործը նույնն է լինելու: Թող նա սկսի հայրենասիրությունը կամ խաղաղասիրությունը դիտել իր կրոնի մաս: Հետո թող, հետախույզների ոգուց ազդված, դա համարի ամենակարեւոր մասը: Այնուհետեւ հանգիստ ու աստիճանաբար դաստիարակիր նրան մինչեւ այն աստիճանը, որում կրոնը դառնում է «նպատակի» պարզապես մի մասնիկը, եւ քրիստոնեությունը դրանում արժեւորվում է հիմնականում այն գերազանց փաստարկներով, որոնք նա տրամադրում է կա՛մ ի շահ Բրիտանիայի պատերազմական գործողությունների, կա՛մ խաղաղասիրության:

Այն վերաբերմունքը, որից դու պիտի հեռու պահես խնամարկյալիդ, այն է, որ ժամանակավոր գործերը դիտվում են հիմնականում որպես հնազանդության նյութ: Երբ դու աշխարհը նպատակ դարձնես, իսկ հավատը՝ միջոց, համարյա շահած կլինես քո այդ մարդուն, եւ աննշան կարեւորություն ունի, թե նա աշխարհային ինչ նպատակ կհետապնդի: Եթե հանրահավաքները, քարոզգրքույկները, քաղաքականությունը, շարժումները, նախաձեռնություններն ու խաչակրաց արշավանքները նրա համար ավելի կարեւոր են, քան աղոթքը, խորհուրդներն ու ողորմությունը, ապա նա մերն է, եւ որքան ավելի «ջերմեռանդ» է նա (նշված առումներով), այնքան ավելի ապահովաբար է մերը: Ես կարող էի քեզ ցույց տալ այդպիսի մարդկանց մի լավ հավաքածու այստեղ:

Քո սիրառատ քեռի՝
ԽԱՌՆԱԿՉԻՀ

Անգլերենից թարգմանությունը՝
Ս. Ս.-ի

Մարկելլին ՕԼԵՍՆԻՑԿԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարոյական աստվածաբանության երկրորդ մասը ներառում է քրիստոնյայի պարտականություններն ու դրանց համապատասխան մասնավոր արարքներն ու առաքինությունները, ինչպես նաեւ՝ մեղքի մասին վարդապետությունը: Քրիստոնյայի բոլոր պարտականությունները կարելի է բաժանել երեք խմբի. պարտականություններ Աստծո հանդեպ (դեպի վեր), մտերիմների (դեպի դուրս) եւ ինքն իր (դեպի ներս): Պողոս առաքյալը Տիտոսին հղած թղթում այս երեք դասակարգերի համար օգտագործում է հետեւյալ արտահայտությունները. մերժել ամբարշտությունն ու աշխարհիկ ցանկությունները, այս աշխարհում ապրենք զգաստությամբ, աստվածպաշտությամբ (Տիտ. Բ 12): Նմանօրինակ բարոյական վերաբերմունք է նախանշվում նաեւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից Աստծո, մերձավորի եւ ինքն իր հանդեպ սիրո պատվիրանի մեջ (Մատթ. ԻԲ 37-39):

Առաքինություններ Աստծո հանդեպ

Աստծո հանդեպ բոլոր պարտականությունները ներառում են իրենց մեջ աստվածհարգության կամ աստվածպաշտության ընդհանուր գաղափարը: Աստվածհարգությունը քրիստոնյայի՝ Աստծուց՝ որպես իր բարձրագույն Տիրոջից ու Արարչից ամբողջովին կախված լինելու հանգամանքի ընդունումն ու արտահայտումն է, ու Նրա հանդեպ անմնացորդ նվիրվածությունն է՝ որպես իր Հոր եւ Բարերարի: Երկրի վրա անկարելի է պատկերացնել այնպիսի վերաբերմունք, որը կհավասարվեր մարդու եւ Աստծո միջեւ եղած հարաբերությանը: Նույնիսկ զորեղ թագավորի եւ չքավոր աղքատի միջեւ եղած հարաբերությունն ընդամենը թույլ նմանությունն է մարդու եւ Աստծո միջեւ հարաբերության, քանի որ երկրավոր թագավորը, որ շնորհել է աղքատին իր բոլոր բարիքներից, չի տվել նրան կյանք եւ չի կարող նրա հոգուն տալ հավիտենական փրկություն կամ հավիտենական կորուստ: Բայց այդ ամենը տվել ու շնորհում է մարդուն Աստված: Ահա թե ինչու, նույնիսկ սերովբեները, համաձայն Եսայի մարգարեի խոսքերի (Զ 2-3), ծածկում են իրենց երեսները՝ անկարող լինելով տանելու Աստծո խոսքի վեհությունը: Այդ պատճառով առաքյալը մեզ՝ հողածիններիս կոչ է անում ծառայել Աստծուն ահով ու դողով (Եբր. ԻԲ 28): «Ես ո՞ւմ եմ նայելու. հեզին ու հոգով խոնարհին եւ Իմ խոսքի առաջ դողացողին» (Ես. ԿԶ 2):

Արտաքին եւ ներքին առաքինություն

Եթե մարդկային բնությունն այնպես է կազմված, որ մարմնավոր ու հոգեւոր, ներքին ու արտաքին գործունեությունը անքակտելիորեն կապված են, եւ եթե Աստված ոչ միայն հոգու արարիչն է, այլեւ մարդկային մարմնի, ապա այստեղից ինքնըստինքյան հետեւում է, որ մենք պարտավոր ենք փառաբանել Աստծուն ե՛ւ մեր մարմնի, ե՛ւ մեր հոգու մեջ, որոնք Աստծո էությունն են (Ա Կորնթ. Զ 20): Այդպիսով, կարելի եւ անհրաժեշտ է ներքին եւ արտաքին փառաբանությունը: Մեկը մյուսի հետ անբաժանելիորեն կապված են: Առանց հոգեւոր կողմի՝ աստվածպաշտությունը կլիներ մարմին առանց հոգու, անկյանք, մեքենայական, առանց որեւէ արժեքի: Այն կլիներ նույնիսկ կեղծավոր, ինքնագոհ. այդ իսկ պատճառով Աստված մարգարեի միջոցով դժգոհություն է հայտնում այդպիսի աստվածպաշտության համար. «Այս ժողովուրդը մոտ է Ինձ իր բերանով, իր լեզվով է մեծարում Ինձ, իսկ նրա սիրտը հեռացած է Ինձանից, ... եւ իզուր են մեծարում Ինձ...» (Ես. ԻԹ 13, Մատթ. ՀԵ 8): Սամարուհու հետ զրույցում Տերը ճշմարիտ երկրպագողներ է անվանում նրանց, ովքեր խոնարհվում են Աստծուն հոգով եւ ճշմարտությամբ: Բայց մյուս կողմից՝ առանց արտաքին կամ մարմնական կողմի, աստվածպաշտությունը կլիներ թերի, անգործունյա եւ չէր կարող ամրանալ մարդու մեջ: Փորձը ցույց է տալիս, որ կրոնական զգացումների արտաքին արտահայտությունների մեջ թերացողները (խաչակնքումներ, գլխի եւ ծնկների խոնարհում եւ այլն) սովորաբար զուրկ են լինում նաեւ ներքին կրոնականությունից: Եվ ընդհակառակը՝ այս միջոցներից ժրաջանորեն եւ իմաստավորված օգտվողներն իրենց մեջ ամրացնում են նաեւ ներքին կրոնական տրամադրվածությունը: Եվ դա բնական է, քանզի ամեն հոգեւոր գործողություն կատարյալ է այնքանով, որքանով այն համապատասխան արտահայտություն է գտնում մարմնի ու արտաքին աշխարհի մեջ: Միաժամանակ, ամեն կենդանի էակ ձգտում է արտահայտվել արտաքնապես. «Սրտի լիությունից է խոսում բերանը» (Մատթ. ԺԲ 34): Այդ պատճառով աշխարհում չկա այնպիսի կրոն, որը չունենա աստվածպաշտության արտաքին ձեւեր: Աբրահամն ընտրվել եւ ղեկավարվում էր Աստծո կողմից, բայց իր դեգերումների ժամանակ, ուր էլ որ հասներ, ամենուրեք զոհասեղան էր պատրաստում Աստծուն (Ծնն. ԺԳ 18): Երկիր եկած Աստծո Որդին հոգեւոր էր գերազանցապես, բայց նույնիսկ Նա արտահայտում էր աղոթքն արտաքին նշաններով (աչքերի երկինք հառելը, դեմքի եւ ծնկների խոնարհումը (Հովհ. ԺԷ 11):

Առաքինություններ՝ արտահայտված ներքին աստվածպաշտությամբ

Քանի որ Աստված մեզ համար բարձրագույն բարիք է եւ մեր ցանկությունների վերջնական նպատակ, ապա Նա արժանի է այն բանին, որ մենք ամեն ինչից շատ սիրենք Նրան: Եվ որովհետեւ միայն Նրա մասնակցությամբ եւ ղեկավարությամբ ենք մենք ի զորու հասնելու նշված նպատակին, ապա պարտավոր ենք ամեն ինչից շատ վստահել Նրան եւ հույս դնել Նրա վրա: Քանի որ Աստված է մեր բարձրագույն Տերն ու անմեղանչելի ճշմարտությունը, ապա մենք պարտավոր ենք ունենալ Նրա հանդեպ անմնացորդ հավատ: Ահա երեք առաքինություններ, որոնք արտահայտում են ներքին աստվածպաշտությունը. հավատ, հույս, սեր: Դրանք ներկայացնում են ողջ քրիստոնեական կյանքի հիմքն ու էությունը: Այդպես է դրանք դիտարկում Պողոս առաքյալը. «Արդ մնում են այդ երեքը. հավատ, հույս, սեր»: Այս երեք առաքինությունները բարոյագիտական համակարգի մեջ է ներմուծել Օգոստինոս Երանելին՝ դրանցով փոխարինելով հեթանոսական չորս հիմնական առաքինությունները: Ի տարբերություն վերջիններիս՝ հետագայում այս երեք առաքինություններն անվանվել են աստվածաբանական: Եթե ուշադրություն դարձնենք առաքելական թղթերի բովանդակությանը, ապա Պողոս առաքյալին կարելի է անվանել հավատո առաքյալ, Պետրոս առաքյալին՝ հուսո առաքյալ, իսկ Հովհաննես առաքյալին՝ սիրո առաքյալ:

Շարունակելի

Թարգմանությունը՝
Սուսաննա ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

ԵՐԳՈՎ ԾՊՈՎՅԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Սկիզբը՝ էջ 5

Փետրվարի 17-ին մեկնեցինք Մինսկ, այնտեղից էլ՝ Գրոդնո: Հակոբ քհն. Խաչատրյանի առաջնորդությամբ եւ փառատոնի ուղեկցորդներ հայր Անդրեի ու Էլինա Հրիհարանի ուղեկցությամբ այցելեցինք Գրոդնոյի մի քանի տեսարժան վայրեր, եղանք 12-րդ դարում կառուցված Սբ Բորիսո-Գլեբսկյան (Կոլոժսկյան) տաճարում, որի 1/3-րդ մասն է պահպանվել:

- Ինչպե՞ս բացվեց փառատոնը:

- Փառատոնի բացման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ փետրվարի 19-ին՝ Բելառուսի Ուղղափառ Եկեղեցու Գրոդնոյի եպիսկոպոսության առաջնորդի խոսքով: Առաջինը ելույթ ունեցավ Բելառուսի Ուղղափառ Եկեղեցու հոգեւորականներից կազմված երգչախումբը, որից հետո հանդես եկավ Մոսկվայի պետական կոնսերվատորիայի երգչախումբը: Վերջինիս ներկայացրած համերգային ծրագրի ընթացքում հնչեցին Ուղղափառ Եկեղեցիների հոգեւոր կատարումներ, նաեւ՝ տարբեր ժողովուրդների ազգային եւ ժողովրդական երգեր, որոնց թվում՝ մեծանուն երգահան Առնո Բաբաջանյանի՝ Մոսկվայի պետական կոնսերվատորիայի երգչախմբի համար յուրովի մշակված «Նոկտյուրնը»:

- Ե՞րբ ելույթ ունեցավ «Հավատամքը», ի՞նչ երգեր կատարվեցին եւ ինչպե՞ս ընդունվեց հանդիսատեսի կողմից:

- Գրոդնոյում փետրվարի 21-ին եւ 22-ին տեղի ունեցան մրցութային համերգներ, եւ «Հավատամք» երգչախմբի կատարմամբ հնչեցին «Անձինք նուիրեալք» եւ «Ով է որպէս» (մշ.՝ Կոմիտաս), «Աստուածածին երկնային» (մշ.՝ Ստ. Բաբաթորոսյան), «Տէ՛ր, եթե զշրթունս իմ բանաս» (մշ.՝ Դ. Հալաջյան) եւ «Յամենայնի» (մշ.՝ Մ. Եկմալյան) շարականները, ինչպես նաեւ՝ «Слава Отцу» (Բորտնյանսկի), «Хоран» (Չայկովսկի), «Господи Иисусе» (Շնիտկե), «Щедрик» (Լեոնտովիչ) եւ «Kyrie» (Յանչակ) Ուղղափառ Եկեղեցիների շարականները: Երգչախմբի կատարմամբ հնչեցին նաեւ «Աղբյուր ես, չորանալ մի» (Ռ. Պետրոսյան), «Սարեն կուգա ջուխտըմ ղոչ», «Հինգ էծ ունեմ», «Շողեր ջան» եւ «Հոյ նազան» (բոլորը՝ Կոմիտասի մշակմամբ) եւ «Ապարան» (Ռ. Պետրոսյան) հայ ազգային եւ ժողովրդական երգերը: Յուրաքանչյուր երգից հետո չէին դադարում ծափողջույններն ու գովեստի խոսքերը. «Երբ նորից կտեսնենք այս հրեշտակներին»,- ասում էին շատերը: Տեղի մամուլն ու հեռուստաընկերությունները նշում էին, որ «Հավատամքը» տարբեր լեզուներով ու ժանրային երգերով բերել է ջերմություն, բարություն եւ կարեւոր հաղորդակցություն: Իրենց փայլուն կատարումներով եւ ձայնային բացառիկ տվյալներով հիացրել էին մենակատարները, նաեւ՝ «Միջնադարյան տաղերն» ու «Կոմիտասը»: Կարեւոր էր դաշնակահարուհի Ռուզաննա Գրիգորյանի եւ լիբանանահայ շնորհալի դիրիժոր Ռաֆֆի Միքայելյանի դերը, ում պրոֆեսիոնալիզմը չէր վրիպել խստապահանջ ժյուրիի աչքից:

- Ի՞նչ մրցանակների արժանացաք, եւ ի՞նչ նշանակություն ունի այն Ձեզ համար:

- Մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ Գրոդնոյի Դրամատիկական թատրոնում: Միջազգային ժյուրիի որոշմամբ՝ «Եկեղեցական երգչախմբեր» անվանակարգում «Հավատամքն» արժանացավ «Առաջին կարգի» դիպլոմի, իսկ երգչախմբի խմբավար Ռաֆֆի Միքայելյանը՝ «Լավագույն խմբավարի»: Փառատոնի ամփոփիչ համերգում հանդես եկան մրցանակային տեղեր զբաղեցրած խմբերը: Հանդիսատեսի՝ «Հավատամքին» ուղղված հոտընկայս ծափողջույններն ու հիացական բացականչությունները փաստում էին, որ երգչախմբի կատարմամբ հայ հոգեւոր եւ ազգային երգերը ջերմորեն ընդունվել են ոչ միայն Բելառուսի հայ համայնքի, այլեւ օտարազգի հանդիսատեսի կողմից: Ասածիս լավագույն ապացույցն այն է, որ «Հավատամք» երգչախումբը պատվոգրի եւ շնորհակալագրի արժանացավ Բելառուսում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան, ԱՊՀ կառույցներում ՀՀ մշտական ներկայացուցիչ տիար Արմեն Խաչատրյանի եւ Բելառուսի մշակույթի նախարարության կողմից: Այս հաղթանակները մեկ անգամ եւս պարտավորեցնում են ապրել եւ աշխատել աստվածահաճո կյանքով՝ հնարավորինս կատարելով Աստծո պատվիրանները:

Փառատոնը լուսաբանող հեռուստահաղորդումները նայելիս հետաքրքրեց Բելառուս Ուղղափառ Եկեղեցու Գրոդնոյի թեմի առաջնորդի ողջույնը. ***«Այս փառատոնը հոգեւոր գարուն է, իսկ այս երգերը միջնորդավորված աղոթքներ են առ Աստված, որովհետեւ այն, ինչ հնարավոր չէ ասել մարդկային լեզվով, հնարավոր է ասել երաժշտությամբ: Սա տարողունակ հոգեւոր ձգտում է առ Աստված, նաեւ՝ ծառայություն Աստծուն»:*** Կարծում եմ՝ փառատոնն իր յուրահատուկ երգերով միավորել է տարբեր ազգերի եւ տարբեր տարիքի մարդկանց եւ բարի ու լուսավոր հետք թողել յուրաքանչյուր մասնակցի հոգում: Այն նաեւ իր կարեւոր դերն է ունեցել հատկապես երիտասարդ սերնդի դաստիարակության հարցում: «Հավատամքը» փայլուն կատարումներով ապացուցել է իր հաստատուն սերն առ Աստված, քանզի միայն իրական սիրով ու տքնությամբ են հաղթում կյանքի բոլոր մրցասպարեզներում:

Հյուրընկալեց
Օվսաննա ՄԱԴԱԹՅԱՆԸ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստորագրված է տպագրության 2.4.2014 թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ